2025թ. առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի

կողմից կատարված աշխատանքների

Հաշվետվություն

1. **Պարկի տարածքում գիտական հետազոտություններ.**

Գլխավոր ձկնաբան-ձկնաբույծ.

Առաջին եռամսյակ. 2025թ. առաջին եռամսյակում Սևանա լճում իրականացվել են ձկնաբանական ուսումնասիրություններ՝ Փոքր Սևանի Ծովազարդ և Մեծ Սևանի Արեգունի, Մարտունի համայնքների ջրային տարածքներում, որոնք հանդիսանում են սիգ ձկնատեսակի ինտենսիվ արդյունահանման վայր:

Սիգ – Առաջին եռամսյակում լճում կատարված ձկնաբանական հետազոտությունների ընթացքում սիգի տարածական բաշխվածության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Սևանա լճի ափամերձ գոտու ամբողջ երկայնքով հունվար-փետրվար ամիսներին ձվադրած 4-5-րդ սեռահասունության փուլում գտնվող վերարտադրող սիգ տեսակի ձկների ձևավորված վտառները գտնվել են հիմնականում ափամերձ գոտում՝ 10-15 մետր խորություններում:

Առաջին եռամսյակում վերը նշված ջրային տարածքներից հանված դնովի ցանցերի մեջ եղած ձկների չափերը Փոքր Սևանում տատանվել են՝ 31,5-32,4 սմ, կշիռը՝ 368,4-392,6 գրամ: Բտվածության միջին գործակիցը՝ F=1,11, K=1,01 (Փոքր Սևան՝ Ծովազարդ): Մեծ Սևանում ձկների չափերը տատանվել են՝ 31,2-32,4 սմ, կշիռը՝ 360,7-394,7 գրամ: Բտվածության միջին գործակիցը՝ F=1,09-1,17, K=1,00-1,06 (Մեծ Սևան՝ Արեգունի):

Սիգի սննդառության առանձնահատկությունների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսումնասիրվող 148 առանձնյակների աղեստամոքսային տրակտում հանդիպել են թիոտանի խեցգետնակերպեր, կողալողեր, փափկամարմիններ:

Սիգի միջին բեղունությունը ուսումնասիրվող ժամանակահատվածում կազմել է՝ 7900-29330 հատ ձկնկիթ: Ձկների սեռական արգասիքները գտնվել են հասունացման 2-5 փուլերում:

Հետազոտված ձկները եղել են 1^+, 2^+, 3^+ և 4^+ տարեկան: Ուսումնասիրություններն իրականացվել են 38*38 մմ և ավել խորշեր ունեցող դնովի ցանցերով: Տվյալների վերլուծությունից պարզվել է, որ ձկները հանդիպել են 10մ-ից մինչև 35 մ խորություններում, ինչը բնորոշ է սիգին տվյալ ժամանակահատվածում:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում ջրի ջերմաստիճանը Սևանա լճում տատանվել է 1,5°C-2,8 °C:

Խեցգետին - 2025թ. առաջին եռամսյակում Սևանա լճում իրականացվել է խեցգետնային համակեցության էկոլոգիական հետազոտություններ: Ուսումնասիրություններ է կատարվել Փոքր Սևանի Ծովազարդ համայնքի ջրային տարածքում: Ձեռք բերված փորձանյութի մշակման արդյունքում ստացվել են պոպուլյացիայի չափատարիքային սեռական կառուցվածքի և ֆիզիոլոգիական վիճակի մասին տվյալներ:

Սևանա լճում խեցգետնի վերարտադրման ընթացքի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ձվադրման գործընթացը սկսվել է փետրվարի սկզբին: Լճում (Ծովազարդի ջրային տարածք) խեցգետնի բեղմնավորված ձվերով էգեր հայտնաբերվել են մարտի առաջին տասնօրյակում, երբ ջրի ջերմաստիճանը լճի մակերեսային շերտում տատանվել է 1,5°C - 2,0°C:

Ուսումնասիրվող տարածքում որսաբաժնում արուների թվաքանակը գերակշռում է էգերի թվաքանակին: Արուների և էգերի հարաբերակցությունը կազմում է մոտ՝ 2:1: Այս հարաբերակցությունը վկայում է գարնանը արուների մեծ ակտիվության մասին: Արուների ակտիվության և որսագործիքների ընտրողականության հետևանքով, թակարդների մեջ հիմնականում ընկնում են առավել ակտիվ կենդանիները:

Խեցգետնի ձևաչափական ցուցանիշների հետազոտությունները ցույց են տվել, որ արու խեցգետինների միջին երկարությունը՝ 9,8 սմ է, քաշը՝ 26,1 գրամ, էգերի համար՝ 10,7 սմ, քաշը՝ 33,3 գրամ (Փոքր Սևան, Ծովազարդ): Տարիքային խմբերը կազմել են՝ 2-4 տարեկան խեցգետինները: Խորությունների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով խեցգետինների տարածվածության սահմանները: Բեղմնավորված այս հիդրոբիոնտները հիմնականում կենտրոնացված էին 2-5 մետր խորություններում:

Երկրորդ եռամսյակ.

Սիգ- 2025 թվականի երկրորդ եռամսյակում Սևանա լճում իրականացվել է սիգի պոպուլյացիոն կենսաբանական ցուցանիշների, նրանց գիրացող վտառի ուսումնասիրություն (գծային և քաշային աճ, չափատարիքային կազմ, սննդառություն):

Սիգի գիրացող վտառի ուսումնասիրման համար գարնանը Ջիլ Մարտունի համայնքների ջրային տարածքներից հանված 40 մմ և ավելի խորշեր ունեցող դնովի ցանցերի մեջ եղած սիգ տեսակի ձկների երկարությունը տատանվել է՝ 31.2-32.0 սմ, քաշը՝ 376.8-397.3 գրամ: Բտվածության գործակիցը՝ F=1.26-1.29, K=1.13-1.19: Փոքր Սևանում՝ Շորժա համայնքի ջրային տարածքից որսված սիգ տեսակի ձկների միջին երկարությունը կազմել է 29.7 սմ, քաշը՝ 358.8 գրամ: Բտվածության միջին գործակիցը՝ F=1.35, K=1.21:

Սիգի սննդառության առանձնահատկությունների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կերի հիմնական բաղադրիչ են կազմել թիոտանի խեցգետնակերպերը, կողալողերը զոոպլանկտոնի և խիրոնոմիդների խառնուրդները:

Փոքր Սևանում գարնանը սիգի հիմնական զանգվածը տեղաբաշխվել է՝ 18-30 մետր խորություններում, դրանցից ներքև նրանք գրեթե չեն հանդիպել: Նմանատիպ փոփոխություններ են նկատվել նաև Մեծ Սևանում: Սիգի հիմնական մասը տեղաբաշխվել է լճի 25 մետր, մինչև հատակ ընկած տարածքում:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում ջրի ջերմաստիճանը Մեծ Սևանում տատանվել է՝ 9.2°C-13.7°C, Փոքր Սևանում՝ 8.3°C-12.1°C:

Կարաս – Երկրորդ եռամսյակում Սևանա լճում ուսումնասիրվել է կարասի կենսաբանական վիճակը՝ պոպուլյացիայի չափատարիքային, վերարտադրման և սեռական կառուցվածքը:

Կարասի պոպուլյացիայի հետազոտման համար փորձանմուշներ ձեռք են բերվել Փոքր Սևանի՝ Ծովագյուղ, Մեծ Սևանի՝ Արտանիշ համայնքների ջրային տարածքներից 45*45 մմ խորշեր ունեցող դնովի ցանցերով:

Փոքր Սևանում հետազոտված կարասի 45 առանձնյակները պատկանել են 2^+, 3^+ և 4^+ տարիքային խմբերի, միջին երկարությունը՝ 18.7 սմ, միջին կշիռը՝ 193.1 գրամ: Բտվածության ցուցանիշը՝ F=3.42, K=2.75: Ձկան որսն իրականացվել է 5-7 մետր խորության վրա, ջրի ջերմաստիճանը՝ 13.8°C:

Մեծ Սևանում հունիս ամսին հետազոտված 57 առանձնյակները պատկանել են 2^+, 3^+ և 4^+ տարիքային խմբերի: Միջին երկարությունը՝ 17.4 սմ, միջին քաշը՝ 189.8 գրամ: Բտվածության ցուցանիշը՝ F=3.74, K=2.98: Կարասի որսն իրականացվել է 8-9 մ խորությունների վրա, ջրի ջերմաստիճանը՝ 15.1°C: Ձկների սեռական արգասիքները գտնվել են հասունացման 3-րդ և 4-րդ փուլերում:

Ուսումնասիրվող կարասի կերի հիմնական բաղադրիչը կազմել են դետրիտը, ֆիտոպլանկտոնային օրգանիզմները, ինչպես նաև բզզան մոծակի թրթուրները:

Խեցգետին – Երկրորդ եռամսյակում Սևանա լճում իրականացվել է խեցգետնային համակեցության էկոլոգիական հետազոտություններ:

Կատարվել են խեցգետնի վերարտադրման, չափատարիքային, սեռական կառուցվածքի հետազոտություններ:

Վերարտադրման ցուցանիշների գնահատման համար հետազոտվել է մոտ 91 էգ խեցգետին:

Սևանա լճում խեցգետնի պոպուլյացիայի սեռական կառուցվածքի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ լճում ընդհանուր առմամբ պահպանվում է արուների և էգերի նախկին հարաբերակցությունը՝ 1:1 էգերի աննշան գերակշռությամբ:

Լճում խեցգետնի ձևաչափական ցուցանիշների հետազոտությունները ցույց են տվել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում որսաբաժնում խեցգետինների միջին երկարությունը Փոքր Սևանում՝ 10.0 սմ, քաշը՝ 28.2 գրամ, Մեծ Սևանում՝ 11.0 սմ, քաշը՝ 39.9 գրամ:

Խեցգետինների միջին բեղունությունը կազմել է՝ 220 ձկնկիթ: Բեղմնավորված ձվի միջին քաշը՝ 11.9 մգ: Էգերի չափերը տատանվել են 8.2-ից 15.0 սմ:

Խեցգետնի պոպուլյացիայի սեռական կառուցվածքը լճի խորության մեծացմանը զուգընթաց փոփոխությունների է ենթարկվել: Էգերի կուտակումներ է առաջացել լճի ափամերձ գոտում մինչև 2-3 մետր: Նրանց թվաքանակը նվազում է 10 մետրից սկսած, իսկ արուների մոտ թվաքանակը սկսում է կրճատվել աստիճանաբար:

Կենդանիների թվաքանակի կրճատվելը հավանաբար կապված է գրունտի փոփոխության հետ: Մեծ խորություններում գերակշռում է փափուկ տիղմը, որը խեցգետնի համար նախընտրելի բիոտոպ չի հանդիսանում: Ուսումնասիրությունների ժամանակահատվածում ջրի մակերեսային շերտի ջերմաստիճանըօրվա տարբեր ժամերի և լճի խորության գոտիներում տատանվել է՝ 6.5°C - 14.1°C:

Երրորդ եռամսյակ.

Սիգ- 2025 թվականի երրորդ եռամսյակում Սևանա լճում սիգի արդյունագործական որսի ժամանակ ձկնաբանական հետազոտություններ են իրականացվել Փոքր Սևանի՝ Հայրավանք, Արևիկ և Մեծ Սևանի Նորատուս համայնքի ջրային տարածքներում, որոնք հանդիսանում են սիգ ձկնատեսակի ինտենսիվ արդյունահանման վայր:

Ուսումնասիրվել են դնովի ցանցերով որսված սիգի չափատարիքային սննդառության առանձնահատկությունները , սեռը և սեռական արգասիքների հասունացման փուլը, տարիքը և բտվածությունը: Փոքր Սևանի՝ Արևիկ և Հայրավանք համայնքի ջրային տարածքներից հանված 40մմ և ավել խորշեր ունեցող դնովի ցանցերի մեջ եղած ձկների երկարությունը տատանվել է՝ 30,3 – 32,6սմ, քաշը՝ 368,8–404,7 գրամ: Բտվածության միջին գործակիցը՝ F=1,24–1,26, K=1,12-1,16: Հետազոտված առաձնյակները պատկանել են 1^+, 2^+ և 3^+ տարիքային խմբերի, որոնք գտնվել են սեռահասունության երրորդ փուլում:

Մեծ Սևանում ուսումնասիրվող սիգ տեսակի ձկների միջին երկարությունը եղել է՝ 31,6սմ, քաշը՝ 405,8 գրամ: Բտվածության ցուցանիշը՝ F=1,32, K=1,22: Ձկների սեռական արգասիքները գտնվել են հասունացման երրորդ փուլում: Հետազոտված ձկները եղել են 1^+, 2^+ և 3^+ տարեկան (Մ. Սևան, Նորատուս): Ուսումնասիրվող ժամանակահատվածում ջրի ջերմաստիճանը տատանվել է 18,0°-21,0°C սահմաններում:

Հուլիս-սեպտեմբեր ամիսներին ուսումնասիրվել են սիգի սննդառության առանձնահատկությունները: Սիգի համար հիմնական կեր են հանդիսացել զոոպլանկտոնային օրգանիզմները՝ դաֆնիաներ, թիոտանի խեցգետնակերպեր, կողալողեր, խիրոնոմիդի հարսնյակներ և թրթուրներ:

Կարաս – 2025 թվականի երրորդ եռամսյակում Սևանա լճում ուսումնասիրվել է կարասի կենսաբանական վիճակը: Մեծ Սևանում կարասի բաշխվածության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Ծովակ համայնքի ջրային տարածքից որսված ձկների միջին երկարությունը՝ 15,8սմ է, քաշը՝ 155,2 գրամ: Բտվածության ցուցանիշը՝ F=3,69, K=2,96: Հետազոտված 22 առանձնյակները պատկանել են 2^+, 3^+, 4^+ և 5^+ տարիքային խմբերի: Որսված ձկնատեսակը հանդիպել է 6-8 խորությունների վրա, երբ ջրի ջերմաստիճանը տատանվում էր 20-21°C սահմաններում: Փորձանմուշները որսվել են դնովի ցանցերով, որոնց խորշերի մեծությունը տատանվել է 40*40 մմ և 45*45 մմ:

Փոքր Սևանում՝ Լճաշեն համայնքի ջրային տարածքից 5-6 մետր խորություններից որսվել է կարաս ձկնատեսակի 24 առաձնյակ, որոնց միջին երկարությունը՝ 18,9սմ, քաշը՝ 205,9 գրամ: Բտվածության գործակիցը՝ F=3,43, K=2,78: Ձկների սեռական արգասիքները գտնվել են հասունացման երրորդ-չորրորդ փուլերում:

Հետազոտությունները ցույց են տվել, որ սեռահասունացման շրջանում կարասի բտվածությունը բարձր է, ինչը վկայում է համեմատաբար կայուն կերային բազայի առկայության մասին: Ուսումնասիրվող կարասի կերի հիմնական բաղադրիչը կազմել են դետրիտը, ֆիտոպլանկտոնային օրգանիզմները:

Խեցգետին – 2025 թվականի երրորդ եռամսյակում Սևանա լճում իրականացվել է խեցգետնային համակեցության էկոլոգիական հետազոտություններ:

Կատարվել են խեցգետնի վերարտադրման, չափատարիքային , սեռական կառուցվածքի, բազմացման ժամանակահատվածի հետազոտություններ:

Խեցգետնական ուսումնասիրություններ են իրականացվել Փոքր Սևանի՝ Ծովագյուղ, Շորժա և Մեծ Սևանի՝ Նորատուս, Կարճաղբյուր համայնքների ջրային տարածքներում:

Սևանա լճում խեցգետնի վերարտադրման ընթացքի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ձվադրման գործընթացը սկսվել է փետրվարի սկզբին: Լճում խեցգետնի բեղմնավորված ձվերով էգեր հայտնաբերվել են մարտի սկզբին, երբ ջրի ջերմաստիճանը լճի հատակային շերտերում տատանվել է 2,0-2,5°C: Խեցգետնիկների ծնունդը գրանցվել է հունիսի երրորդ տասնօրյակից մինչև հուլիսի առաջին տասնօրյակը, երբ ջրի ջերմաստիճանը գերազանցել է 19°C: Ձագերի առավելագույն քանակը եղել է 180 հատ, հիալինային թելերով մայրական օրգանիզմին դեռևս կպած ձագերի միջին կշիռը կազմել է՝ 12 մգ:

Փորձանմուշների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսումնասիրվող առանձնյակներ, որոնց չափերը գերազանցում են 9սմ-ը, մաշկափոխությունն իրականացրել են հունիս-սեպտեմբեր ամիսներին:

Ուսումնասիրվող ծամանակահատվածում Սևանա լճի տարբեր տեղամասերում կատարված խեցգետնի որսի արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ որսաբաժնում գերակշռել են էգերը, վերջինիս հավանաբար հետևանք է այն բանի, որ վերարտադրման շրջանում էգերը ավելի ակտիվ են սնվում և ավելի շատ են գնում դեպի խայծը:

Սևանա լճում խեցգետնի ձևաչափական ցուցանիշների հետազոտությունները ցույց են տվել, որ արու խեցգետինների միջին չափը Փոքր Սևանում՝ 10,2 սմ է:, քաշը՝ 29,1 գրա, Մեծ Սևանում՝ 9,6 սմ, քաշը՝ 25,1 գրամ: Էգերի համար համապատասխանաբար ցուցանիշները Փոքր Սևանում՝ 10,4 սմ, քաշը՝ 25,9 գրամ, Մեծ Սևանում՝ 10,5 սմ, քաշը՝ 28,1 գրամ:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում ի տարբերություն նախորդ տարիներին նույն ժամանակաշրջանի համեմատ, մոդալ տարիքային խմբերից

գերակշռում են 2-3 տարեկան կենդանիները: Փոքր Սևանում կենդանիների միջին գծային չափերն աննշան չափով փոքր են Մեծ Սևանի համեմատ: Ըստ խորությունների խեցգետնի բաշխվածության մեջ նկատվում է տեղաշարժ դեպի ափամերձ տարածքներ: Խեցգետնի առկայություն է գրանցվել 2 մետր խորություններից սկսած: Նման տեղաշարժի պատճառ կարող է լինել լճում ջրիմուռների ծաղկմանը հաջորդող փտման պրոցեսների հետևանքով թթվածնային պայմանների վատացումը: Բացի այդ, վերջինս հավանաբար կապված է նաև խեցգետնի տարիքային խմբերի փոքրացման հետ, քանի որ առավել մեծ խորությունները միշտ զբաղեցված էր խոշոր և ուժեղկենդանիներով, իսկ լճի ափի ծանծաղուտներում, հատկապես մակրոֆիտային գոտում, հանդիպում էին մեկից երկու տարեկան կենդանիները:

Ձկնաբուծություն – Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման հիմնադրամի կողմից Սևանա լճում գեղարքունի իշխան ենթատեսակի պաշարների վերականգնման նպատակով 2025 թվականի մայիսի 3-ին «Սևանի իշխան» ՓԲԸ-ի Կարճաղբյուր համայնքում տեղակայված մանրաձկան գործարանից բաց է թողնվել գեղարքունի ենթատեսակի թվով 36000 մանրաձուկ՝ 23.8 գրամ միջին քաշով, ընդամենը՝ 858 կգ:

2025 թվականի մայիսի 22-ին վերը նշված ձկնաբանական գործարանից բաց է թողնվել ամառային ենթատեսակի թվով՝ 38800 հատ մանրաձուկ՝ 34.0 գրամ միջին քաշով, ընդամենը՝ 1319.2 կգ: Մանրաձկների բաղթողումը իրականացվել է Կարճաբյուր համայնքին հարող Սևանա լճի ջրային տարածքում: Բաց թողնված վայրերի տարածքներում սահմանվել է շուրջօրյա հերթապահություն մանրաձկների բնական հարմարվողականությունն ապահովելու համար:

Չորրորդ եռամսյակ.

Սիգ - 2025 թվականի չորրորդ եռամսյակում Սևանա լճում սիգի արդյունագործական որսի ժամանակ ձկնաբանական հետազոտություններ են իրականացվել փոքր Սևանի՝ Լճափ և մեծ Սևանի՝ Երանոս համայնքների ջրային տարածքներում, որոնք հանդիսանում են սիգ ձկնատեսակի ինտենսիվ արդյունահանման վայր:

Ուսումնասիրվել են դնովի ցանցերով որսված սիգի չափատարիքային, սննդառության առանձնահատկությունները, սեռը և սեռական արգասիքների հասունացման փուլը, բեղունությունը, տարիքը և բտվածությունը: Փոքր Սևանի՝ Լճափ համայնքի ջրային տարածքից հանված 40 մմ և ավել խորշեր ունեցող դնովի ցանցերի մեջ եղած ձկների միջին երկարությունը եղել է՝ 31,0 սմ, քաշը՝ 362,9 գրամ: Բտվածության միջին գործակիցը՝ F=1,17, K=1,04: Հետազոտված առանձնյակները պատկանել են՝ 1^+, 2^+, 3^+, 4^+ և 5^+ տարիքային խմբերի, որոնք գտնվել են սեռահասունության երկրորդ, երրորդ և չորրորդ փուլերում:

Մեծ Սևանում ուսումնասիրվող սիգ տեսակի ձկների միջին երկարությունը եղել է՝ 32,1 սմ, քաշը՝ 443,9 գրամ: Բտվածության ցուցանիշը՝ F=1,35, K=1,24: Ձկների սեռական արգասիքները գտնվել են հասունացման երրորդ և չորրորդ փուլերում: Հետազոտված ձկները եղել են՝ 1^+, 2^+ և 3^+ տարեկան (Մեծ Սևան, Երանոս): Ուսումնասիրվող ժամանակահատվածում ջրի ջերմաստիճանը տատանվել է՝ 12,0° – 13,0° C սահմաններում:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում սիգի միջին բեղունությունը կազմել է՝ 9800-14200 հատ ձկնկիթ:

Սիգի սննդառության առանձնահատկությունների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կերի հիմնական բաղադրիչ են կազմել թիոտանի խեցգետնակերպերը, կողալողերը, զոոպլանկտոնի և խիրոնոմիդների խառնուրդները:

Կարաս – 2025 թվականի չորրորդ եռամսյակում Սևանա լճում ուսումնասիրվել է կարասի կենսաբանական վիճակը:

Կարասի պոպուլյացիայի հետազոտման համար փորձանմուշներ են ձեռք բերվել Մեծ Սևանի՝ Նորատուսի համայնքի ջրային տարածքից, դնովի ցանցերով, որոնց խորշերի մեծությունը տատանվել է՝ 40*40 մմ և ավել սահմաններում:

Հետազոտված 20 առանձնյակները պատկանել են՝ 3^+, 4^+ և 5^+ տարիքային խմբերի: Ուսումնասիրվող ձկների միջին երկարությունը՝ 18,7 սմ, քաշը՝ 189,7 գրամ: Բտվածության միջին գործակիցը F=3,30, K=2,63: Որսված կարաս տեսակի ձկները հանդիպել են 6-9 մետր խորությունների վրա, երբ ջրի ջերմաստիճանը տատանվում էր 12-14°C սահմաններում: Ձկների սեռական արգասիքները գտնվել են հասունացման 3-րդ և 4-րդ փուլերում:

Ուսումնասիրվող կարասի կերի հիմնական բաղադրիչը կազմել են դետրիտը, ֆիտոպլանկտոնային օրգանիզմները, ինչպես նաև բզզան մոծակի թրթուրները:

Խեցգետին – 2025 թվականի չորրորդ եռամսյակում Սևանա լճում իրականացվել է խեցգետնային համակեցության էկոլոգիական հետազոտություններ: Խեցգետնի թակարդներով փորձանմուշներ են ձեռք բերվել փոքր Սևանի՝ Դրախտիկ և մեծ Սևանի՝ Երանոս համայնքների ջրային տարածքներից:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում Սևանա լճում խեցգետնի ձևաչափական ցուցանիշների հետազոտությունները ցույց են տվել, որ որսաբաժնում խեցգետինների միջին երկարությունը փոքր Սևանում համապատասխանաբար եղել են՝ 9,9 սմ, կշիռը՝ 24,8 գրա: Մեծ Սևանում՝ 9,8 սմ, կշիռը՝ 25,2 գրամ: Լճի ջերմաստիճանը տատանվել է՝ 12,0 – 15,0°C:

Սևանա լճում խեցգետնի տարածական տեղաբաշխման հետազոտությունները ցույց են տվել, որ այս հիդրոբիոնտները (1-3 տարեկան) հիմնականում կենտրոնացված են 2-4 մետր խորություններում: Խոշոր առանձնյակները (4-6 տարեկան) լճում հանդիպում են սահմանափակ քանակով և հիմնականում նախընտրում են հանդիպում մակրոֆիտներով ծածկված ծանծաղուտներում, նշված

վայրերը նրանց համար ծառայում են ոչ միայն որպես թաքստոց, այլև որպես սննդի աղբյուր:

Հիդրոկենսաբան – Երկրորդ եռամսյակ. 2025թ. երկրորդ եռամսյակում հիդրոկենսաբանի կողմից ուսումնասիրվել է Սևանա լիճ թափվող Ձկնագետ,Դրախտիկ, Գավառագետ և Լիճք գետերի տարբեր հատվածների ջրերում սապրոֆիտ մանրէների թվաքանակը (աճեցված 37^0C 24 ժամվա ընթացքում և 20^0C՝ 48 ժամ տևողությամբ) և կոլի-ինդեքսը (աղիքային ցուպիկների խմբի մանրէների քանակը 1լ. ջրում): Զուգահեռ նաև ուսումնասիրվել է ջրում լուծված թթվածնի և օրգանական նյութի պարունակությունը՝ ըստ պերմանգանատային օքսիդացման արժեքի: 20^0C-ում և 37^0C-ում աճեցված սապրոֆիտ մանրէների քանակական արժեքների հարաբերակցության հիման վրա որոշվել է գետի ինքնամաքրման ինտենսիվությունը:

Մանրէաբանական հետազոտությունների արդյունքներից ելնելով՝ կատարվել է գետերի ջրերի որակի գնահատում:

Գետ Ձկնագետ

Վերին հոսանք – կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ գետի վերին հոսանքի ջրերում 20^0C և 37^0C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 1300 ԳԱՄ/մլ և 57 ԳԱՄ/մլ: 20 մլ փորձանմուշում աղիքային ցուպիկ չի հայտնաբերվել: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման արժեքը կազմել է 22,8: Դիտակետի ջրերում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 10,4 մգO_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 5,6 մգO_2/դմ^3 (աղ.1):

Աղյուսակ 1. Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը, ջրում լուծված թթվածնի և պերմանգանատային օքսիդացման արժեքը Ձկնագետի տարբեր հատվածների ջրերում
27.04.2025թ.

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հզ ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO_2/դմ^3,	Պերմանգան ատային օքսիդացում, մգO/դմ^3
	20°C	37°C			
Վերին հոսանք	1300	57	Չի հայտնաբերվել	10,4	5,6
Սեմյոնովկա գյուղի անասնապահական հոսքաջրերի մուտքից մոտ 500մ ներքև	2300	210	2,8	9,9	6
Գետաբերան	3500	350	27	10,4	5,7

Սեմյոնովկա գյուղի անասնապահական հոսքաջրերի մուտքից՝ մոտ 500մ ներքև- հոսքաջրերը, լցվելով գետ, այն ենթարկում են աղտոտման, ինչի արդյունքում վերին հոսանքի համեմատ արձանագրվել է մանրէների թվաքանակի աճ: Այսպես, 20^{0}C և 37^{0}C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 2300 ԳԱՄ/մլ և 210 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 2,8 հզ.ԳԱՄ/լ: Նվազել է ինքնամաքրման ինտենսիվությունը(10,9): Լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը գրեթե չի փոփոխվել:

Գետաբերան - այս հատվածին հարող տարածքը բնութագրվում է ակտիվ տնտեսական գործունեությամբ, որով էլ պայմանավորված՝ նախորդ դիտակետի համեմատ՝ արձանագրվել է մանրէների թվաքանակի ավելացում: Այսպես, 20°C-ում և 37°C-ում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 3500 ԳԱՄ/մլ և 350 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 27 հզ.ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 5,4 անգամ: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման արժեքը կազմել է 10: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը համապատասխանաբար կազմել է 10,4 մգO_2/դմ^3 և 5,7 մգO_2/դմ^3:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության՝ 2018թ. N 09 հրամանի՝ «Ռեկրեացիոն նպատակով ջրօգտագործման վայրերում մակերևութային ջրային ռեսուրսների ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջների» N 2.1.5.001- 18 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին որոշման, ընդհանուր

կոլիֆորմ մանրէների (37°C-ում աճեցված աղիքային ցուպիկների խմբի մանրէներ) թվաքանակը չպետք է գերազանցի 500 ԳԱՄ/ 100մլ. արժեքը: Նշված արժեքը գետաբերանի հատվածում գերազանցել է ՍԹԿ-ն (սահմանային թույլատրելի կոնցենտրացիան) 5 անգամ:

Գետ Դրախտիկ

Մինչ Դրախտիկ գյուղ մտնող հատված - կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ գետի այս հատվածի դիտակետի ջրերում 20° C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 5100 ԳԱՄ/մլ և 370 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 1,2 հզ. ԳԱՄ/լ: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման արժեքը կազմել է 13,7: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 10 մգO_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 6,4 մգO_2/դմ^3 (աղ.2):

Աղյուսակ 2.Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը, լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը Դրախտիկ գետի տարբեր հատվածների ջրերում
27.04.2025թ.

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հզ ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO_2/դմ^3,	Պերմանգանատային օքսիդացում, մգO/դմ^3
	20°C	37°C			
Մինչ Դրախտիկ գյուղ մտնող հատված	5100	370	1,2	10	6,4
Գետաբերան	30500	2500	120	9.8	7

Գետաբերան - գետը, հոսելով համանուն գյուղի միջով, խիստ աղտոտվում է ֆեկալ-կենցաղային և անասնապահական հոսքաջրերով, որոնց հետևանքով վերցված փորձանմուշում՝ նախորդ դիտակետի համեմատ՝ արձանագրվել է մանրէների թվաքանակի ավելացում՝ հատկապես աղիքային ցուպիկների: Այսպես, 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 30500 ԳԱՄ/մլ և 2500

ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 120 հզ. ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 24 անգամ: Որոշ չափով նվազել է ինքնամաքրման ինտենսիվությունը (12,2): Դիտակետի ջրերում լուծված թթվածնի պարունակությունը գրեթե չի փոփոխվել, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը որոշ չափով բարձրացել է՝ կազմելով 7 մգO_2/դմ^3:

Գետ Գավառագետ

Վերին հոսանք - գետի այս հատվածի դիտակետի ջրերում 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 900 ԳԱՄ/մլ և 26 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 0,15 հզ. ԳԱՄ/լ: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման արժեքը կազմել է 34,6: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 9.5 մգO_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 1,9 մգO/դմ^3 (աղ.3):

Աղյուսակ 3. Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը,ջրում լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը Գավառագետի տարբեր հատվածների ջրերում
02. 06. 2025թ.

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հզ. ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO_2/դմ^3	Պերմանգան ատային օքսիդացում, մգO/դմ^3
	20°C	37°C			
Վերին հոսանք	900	26	0,15	9.5	1,9
Նորատուս գյուղից վերև՝ ավտոմայրուղու կամրջի հարևանությամբ	5600	500	100	10.5	1,6
Գետաբերան	4800	450	30	10.4	3

Նորատուս գյուղից վերև՝ ավտոմայրուղու կամրջի հարևանությամբ-գետը, հոսելով Գավառ համայնքի և մի շարք գյուղերի միջով ենթարկվում է ֆեկալ-

տնտեսական և գյուղատնտեսական հոսքաջրերով աղտոտման: Դեռ ավելին, դիտակետից մոտ 300 մ վերև Գավառ համայնքի կեղտաջրերի մեխանիկական մաքրման կայանի արտահոսքերը լցվելով գետ էլ ավելի են մեծացնում մարդահարույց ճնշումը, ինչի արդյունքում դիտակետի ջրերում վերին հոսանքի համեմատ արձանագրվել է մանրէներով՝ հատկապես աղիքային ցուպիկներով աղտոտվածության բարձր մակարդակ: Այսպես, 20^0C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէների քանակը համապատասխանաբար կազմել է 5600 ԳԱՄ/մլ և 500 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 100 հզ.ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 20 անգամ: Վերին հոսանքի համեմատ նվազել է ինքնամաքրման գործընթացը (11,2): Ջրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 10,5 մգO_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 1,6 մգO/դմ^3:

Գետաբերան- ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գետի ջուրը Նորատուսից դեպի գետաբերան 5,84 կմ հատվածում ենթարկվում է ինքնամաքրման, ինչի արդյունքում մանրէների թվաքանակը նախորդ դիտակետի համեմատ նվազել է՝ հատկապես աղիքային ցուպիկները: Այսպես, 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 4800 ԳԱՄ/մլ և 450 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 30 հզ.ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 6անգամ: Որոշ չափով նվազել է նաև ինքնամաքրման գործընթացի ինտենսիվությունը (10,6): Գետաբերանի ջրերում լուծված թթվածնի պարունակությունը նախորդ դիտակետի համեմատ գրեթե չի փոփոխվել,իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը բարձրացել է՝ կազմելով 3 մգO/դմ^3:

Գետ Լիճք

Ակունք - Ի տարբերություն նախորդ տարիների գետի ակունքի ջրերում հայտնաբերվել են նաև 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէներ և աղիքային ցուպիկներ, ինչը հավանաբար պայմանավորված է հարակից տարածքում անասունների արտաթորանքի աղտոտվածությամբ: Իրականացված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ գետի ակունքի ջրերում 20^0C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէների քանակը համապատասխանաբար կազմել է 280 ԳԱՄ/մլ և 23 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 0,2 հզ.ԳԱՄ/լ: Ինքնամաքրման արժեքը կազմել է 12: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 9 մգO_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 0,48 մգO/դմ^3 (Աղ.4):

Աղյուսակ 4.Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը, ջրում լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը Լիճք գետի տարբեր հատվածների ջրերում

02.06.2025թ.

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հզ. ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO_2/դմ^3,	Պերմանգան ատային օքսիդացում, մգO/դմ^3
	20°C	37°C			
Ակունք	280	23	0,2	9	0.48
Գետաբերան	3200	200	10	9.2	0,8

Ստորին հոսանք - գետը՝ հոսելով համանուն գյուղի միջով, աղտոտվում է ֆեկալ-տնտեսական և ձկնաբուծական տնտեսությունների հոսքաջրերով, ինչի արդյունքում ակունքի համեմատ արձանագրվել է մանրէների թվաքանակի աճ: Այսպես, 20^{0}C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէների քանակը համապատասխանաբար կազմել է 3200 ԳԱՄ/մլ և 200 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 10 հզ.ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 2 անգամ: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման արժեքը ակունքի համեմատ բարձրացել է՝ կազմել է 16: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 9.2 մգO_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 0,8 մգO/դմ^3:

Այսպիսով, ուսումնասիրությունների արդյունքներից պարզ է դարձել, որ գետերը բնակավայրերի տարածքներով հոսելիս ենթարկվում են ֆեկալ-տնտեսական և գյուղատնտեսական հոսքաջրերով ինտենսիվ աղտոտման: Մանրէներով առավել աղտոտված են եղել Գավառագետ և Դրախտիկ գետերը: Սապրոֆիտ մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման գործընթացի ինտենսիվությունը Ձկնագետ, Գավառագետ և Դրախտիկ գետերում ակունքից դեպի գետաբերան նվազել է (34,6-10), իսկ Լիճք գետում՝ ակտիվացել (12-16):

Նախորդ տարիների համեմատ գետերի ջրերում մանրէների տարածական բաշխվածության պատկերը գրեթե չի փոխվել, ինչը պայմանավորված է կեղտաջրերի մշտական մուտքով:

Պերմանգանատային օքսիդացման արժեքը ուսումնասիրված գետերի ջրերում փոփոխվել է 0,48-7մգO/դմ^3 սահմաններում: Համեմատաբար բարձր արժեքներ արձանագրվել են Ձկնագետ և Դրախտիկ գետերի ջրերում՝ պայմանավորված գետերի գարնանային վարարումներով: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը տատանվել է 9-10,5 մգO_2/դմ^3 տիրույթում:

Հետազոտված գետերի գետաբերանի հատվածներում, ինչպես նաև Գավառագետի Նորատուս գյուղից վերև գտնվող դիտակետում ռեկրեացիոն նպատակով օգտագործվող ջրերի՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից

սահմանված չափաքանակը գերազանցել է 2-24 անգամ: Նշված հատվածների ջրերը չի կարելի օգտագործել ռեկրեացիոն նպատակով:

Համաձայն Վ. Դ. Ռոմանենկոյի (Романенко и др., 1990)՝ մակերևութային ջրերի էկոլոգասանիտարական գնահատման, ըստ կոլի-ինդեքսի արժեքների Ձկնագետ, Դրախտիկ և Լիճք գետերի վերին հոսանքների ջուրը գնահատվել է որպես «շատ մաքուր», իսկ Գավառագետը՝ «բավարար մաքուր: Գետաբերանի հատվածներում Լիճք գետի ջուրը դասվել է «թույլ աղտոտված», Գավառագետ և Ձկնագետ գետերի ջրերը՝ «չափավոր աղտոտված», իսկ Դրախտիկ գետի ջրերը՝ «շատ կեղտոտ» ջրերի շարքին: Գավառագետի՝ Նորատուս համայնքից վերև գտնվող դիտակետի ջուրը գնահատվել է որպես «ուժեղ աղտոտված»:

Համաձայն Ժ.Պ. Ամբրազենի (Амбразене, 1974) դասակարգման՝ ըստ 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակի՝ Ձկնագետ, Գավառագետ և Լիճք գետերի վերին հոսանքների ջրերը դասվել են «մաքուր», իսկ Դրախտիկը՝ «թույլ աղտոտված» ջրերի դասին: Ձկնագետ և Գավառագետ գետերի գետաբերանի հատվածներում ջուրը դասվել է «թույլ աղտոտված», Դրախտիկ գետը՝ «չափավոր աղտոտված», իսկ Լիճք գետը՝ «մաքուր» ջրերի դասին:

2025թ. երրորդ եռամսյակում հիդրոկենսաբանի կողմից ուսումնասիրվել է Սևանա լիճ թափվող Ծակքար,Մարտունի,Արգիճի և Կարճաղբյուր գետերի տարբեր հատվածների ջրերում սապրոֆիտ մանրէների թվաքանակը (աճեցված 37^0C 24 ժամվա ընթացքում և 20^0C՝ 48 ժամ տևողությամբ) և կոլի-ինդեքսը (աղիքային ցուպիկների խմբի մանրէների քանակը 1լ. ջրում): Զուգահեռ նաև ուսումնասիրվել է ջրում լուծված թթվածնի և օրգանական նյութի պարունակությունը՝ ըստ պերմանգանատային օքսիդացման արժեքի: 20^0C-ում և 37^0C-ում աճեցված սապրոֆիտ մանրէների քանակական արժեքների հարաբերակցության հիման վրա որոշվել է գետի ինքնամաքրման ինտենսիվությունը:

Մանրէաբանական հետազոտությունների արդյունքներից ելնելով՝ կատարվել է գետերի ջրերի որակի գնահատում:

Մանրէաբանական հետազոտություններ են իրականացվել նաև Փոքր Սևանի՝ հանգստացողներով առավել ծանրաբեռնված լողափերի (հանրային թիվ 1, թիվ 2,թիվ 3 և թերակղզի) ջրերի սանիտարական վիճակի գնահատման համար:

Գետ Ծակքար

Ակունք- կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, գետի ակունքի ջրերում 20^0C և 37^0C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէների քանակը համապատասխանաբար կազմել է 1300 ԳԱՄ/մլ և 250 ԳԱՄ/մլ: Դիտակետի ջրերում արձանագրվել է գետի ակունքին ոչ բնորոշ կոլի-ինդեքսի համեմատաբար բարձր արժեք՝ 4 հզ.ԳԱՄ/լ, ինչը պայմանավորված է գետի ակզբնամասի ափամերձ տներից ֆեկալ-տնտեսական հոսքաջրերի մուտքով: Մանրէների միջոցով

իրականացվող ինքնամաքրման գործընթացի արժեքը կազմել է 5,2: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 10,5 մգO_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 0,8 մգO/դմ^3 (աղ.1):

Աղյուսակ 1. Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը,լուծված թթվածնի պարունակություն և պերմանգանատային օքսիդացման արժեքը Ծակքար գետի տարբեր հատվածների ջրերում 02.07.2025թ.

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հզ. ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO_2/դմ^3,	Պերմանգանատային օքսիդացում, մգO/դմ^3
	20°C	37°C			
Ակունք	1300	250	4	10,5	0,8
Գետաբերան	3000	300	5	13	2

Գետաբերան- գետը, հոսելով համանուն գյուղի միջով, ենթարկվում է աղտոտման ֆեկալ-տնտեսական հոսքաջրերով, ինչի արդյունքում ակունքի համեմատ արձանագրվել է մանրէների թվաքանակի ավելացում:

Այսպես, 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 3000 ԳԱՄ/մլ և 300 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 5 հզ.ԳԱՄ/լ: Ակտիվացել է ինքնամաքրման գործընթացը (10), պայմանավորված ջրում լուծված թթվածնի համեմատաբար բարձր արժեքով (13 մգO_2/դմ^3): Բարձրացել է նաև պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ կազմելով 2 մգO/դմ^3:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության՝ 2018թ. N 09 հրամանի՝ «Ռեկրեացիոն նպատակով ջրօգտագործման վայրերում մակերևութային ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջների» N 2.1.5.001- 18 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին որոշման, ընդհանուր կոլիֆորմ մանրէների (37°C-ում աճեցված աղիքային ցուպիկների խմբի մանրէներ) թվաքանակը չպետք է գերազանցի 500 ԳԱՄ/ 100մլ. արժեքը: Նշված արժեքը գետի ջրերում չի գերազանցում սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (ՍԹԿ-ն):

Գետ Մարտունի

Վերին հոսանք-կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ գետի վերին հոսանքի դիտակետի ջրերում 20^{0}C և 37^{0}Cջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 1800 ԳԱՄ/մլ և 470 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 1 հզ.ԳԱՄ/լ: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման արժեքը կազմել է 3,8: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 9,5 մգO_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 1,2 մգO/դմ^3 (աղ.2):

Աղյուսակ 2. Սապրոֆիտ մանրէների թվաքանակը, կոլի-ինդեքսը,լուծված թթվածնի պարունակություն և պերմանգանատային օքսիդացման արժեքը Մարտունի գետի տարբեր հատվածների ջրերում

02.07.2025թ.

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հզ ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO_2/դմ^3,	Պերմանգանատային օքսիդացում, մգO/դմ^3
	20°C	37°C			
Վերին հոսանք	1800	470	1	9,5	1,3
Մինչ կեղտաջրերի մեխ. մաքրման կայանի արտահոսքերի մուտքը	2500	425	4	-	1,2
Ստորին հոսանք	800000	300000	8500	7.8	16

Մինչ Մարտունի համայնքի կեղտաջրերի մեխանիկական մաքրման կայանի արտահոսքերի մուտքը- կատարված հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ գետի այս հատվածի ջրերում սապրոֆիտ մանրէների թվաքանակը նախորդ դիտակետի համեմատ էականորեն չի փոփոխվել, իսկ կոլի-ինդեքսի արժեքը բարձրացել է՝ կազմելով 4 հզ.ԳԱՄ/լ: Որոշ չափով բարձրացել է նաև մանրէների միջոցով իրականացվող ինքնամաքրման ինտենսիվությունը (5,8): Պերմանգանատային օքսիդացման արժեքը կազմել է 1,2 մգO/դմ^3:

Ստորին հոսանք (Մարտունի համայնքի կեղտաջրերի մեխանիկական մաքրման կայանի արտահոսքերիմուտքից մոտ 200մ ներքև)- Մաքրման կայանի արտահոսքերը (միջին օրական ծավալը կազմում է մոտ 2,7 հզ.մ^3) լցվելով գետ, այն ենթարկում են խիստ աղտոտման: Այսպես, 20^{0}C և 37^{0}C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 800000 ԳԱՄ/մլ և 300000 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 8,5մլն.ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցում է 1700 անգամ: Նախորդ դիտակետի համեմատ նվազել է ինքնամաքրման գործընթացը (2,6) և ջրում լուծված թթվածնի պարունակությունը (7,8մգO$_2$/դմ^3): Բարձրացել է պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ կազմելով 16 մգO/դմ^3:

Գետ Կարճաղբյուր

Վերին հոսանք- 20˚C և 37˚C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 1100 ԳԱՄ/մլ և 200 ԳԱՄ/մլ: 20մլ փորձանմուշում աղիքային ցուպիկ չի հայտնաբերվել: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման արժեքը կազմել է 5,5: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 10,8 8մգO$_2$/դմ^3,իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 1,4 մգO/դմ^3 (աղ.3):

Աղյուսակ 3. Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը,լուծված թթվածնի պարունակություն և պերմանգանատային օքսիդացման արժեքը Կարճաղբյուր գետի տարբեր հատվածների ջրերում

16.09.2025թ.

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հզ ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO$_2$/դմ^3,	Պերմանգանատային օքսիդացում, մգO/դմ^3
	20˚C	37˚C			
Վերին հոսանք	1100	200	Չի հայտնաբերվել	10,8	1,4

Ստորին հոսանք	3500	310	10	8,5	1,6

Գետաբերան-գետը, հոսելով համանուն գյուղի միջով ենթարկվում է աղտոտման ֆեկալ-տնտեսական և գյուղատնտեսական հոսքաջրերով, որի արդյունքում դիտակետի ջրերում՝ վերին հոսանքի համեմատ արձանագրվել է մանրէների թվաքանակի ավելացում: Այսպես, 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 3500 ԳԱՄ/մլ և 310 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 10 հզ.ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցում է 2 անգամ: Ակտիվացել է ինքնամաքրման գործընթացը (11,2) և նվազել է լուծված թթվածնի պարունակությունը՝ 8,5 մգO_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը բարձրացել է՝ կազմելով 1,6 մգO/դմ^3:

Գետ Արգիճի

Վերին հոսանք- կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ դիտակետի ջրերում 20^{0}C և 37^{0}C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 750 ԳԱՄ/մլ և 50 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 0,05 հզ.ԳԱՄ/լ: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման արժեքը կազմել է մոտ 15: Լուծված թթվածնի պարունակությունը եղել է 9,7 մգO_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 2,2 մգO/դմ^3 (աղ.4):

Աղյուսակ 4.Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը, լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը Արգիճի գետի տարբեր հատվածների ջրերում
16.09.2025թ.

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների թվաքանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հազ. ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO_2/դմ^3,	Պերմանգանատային օքսիդացում, մգO/դմ^3
	20°C	37°C			
Վերին հոսանք	750	50	0,05	9,7	2,2

Ներքին Գետաշենից ներքև՝ ավտոմայրուղում կամրջի հարևանությամբ	2000	360	2,5	10,8	1,8
Գետաբերան	2500	-	5,4	11,3	2,6

Ներքին Գետաշեն գյուղից ներքև՝ ավտոմայրուղու կամրջի հարևանությամբ- գետը հոսելով Մադինա, Վերին Գետաշեն և Ներքին Գետաշեն գյուղերի տարածքներով, աղտոտվում է ֆեկալ-տնտեսական և գյուղատնտեսական հոսքաջրերով, որի հետևանքով վերցված փորձանմուշում նախորդ դիտակետի համեմատ, արձանագրվել է մանրէների թվաքանակի ավելացում: Այսպես, 20^0C և 37^0C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 2000 ԳԱՄ/մլ և 360 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 2,5 հզ. ԳԱՄ/լ: Վերին հոսանքի համեմատ նվազել է ինքնամաքրման գործընթացի ակտիվությունը (5,5): Ջրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 10,8 մգ O_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 1,8 մգO/դմ^3:

Գետաբերան- 20°Cջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէների թվաքանակը և կոլի-ինդեքսի արժեքը նախորդ դիտակետի համեմատ բարձրացել է՝ համապատասխանաբար կազմելով 2500 ԳԱՄ/մլ և 5,4 հզ.ԳԱՄ/լ, որը գերազանցում է ՍԹԿ-ն: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 11,3 մգ O_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 2.6 մգO/դմ^3:

Այսպիսով, ուսումնասիրությունների արդյուներից պարզ է դարձել, որ գետերը բնակավայրերի տարածքներով հոսելիս ենթարկվում են ֆեկալ-տնտեսական և գյուղատնտեսական հոսքաջրերով աղտոտման: Մանրէներով առավել աղտոտված է եղել Մարտունի գետի ստորին հոսանքը, պայմանավորված մաքրման կայանի արտահոսքերի մուտքով: Սապրոֆիտ մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման գործընթացի ինտենսիվությունը Կարճաղբյուր և Ծակքար գետի վերին հոսանքից դեպի գետաբերան բարձրացել է (5,2-14,2), իսկ Արգիճի գետերում նվազել՝ (15-2,6):

Նախորդ տարիների համեմատ ուսումնասիրված գետերի ջրերում մանրէների տրածական բաշխվածության պատկերը գրեթե չի փոփոխվել, ինչը պայմանավորված է կեղտաջրերի մշտական մուտքով:

Պերմանգանատային օքսիդացման արժեքը գետերի ջրերում փոփոխվել է 0,8-16 մգO/դմ^3 սահմաներում: Բարձր արժեք է արձանագրվել Մարտունի գետի ստորին

հոսանքում: Ջրերում լուծված թթվածնի պարունակությունը տատանվել է 7,8-13 մգO_2/դմ^3:

Ծակքար և Կարճաղբյուր գետերի գետաբերանի հատվածներում ռեկրեացիոն նպատակով օգտագործվող ջրերի՝ ՀՀ առողջապահության նախարարության սահմանված չափաքանակը գերազանցել է 1,08-2 անգամ, իսկ Մարտունի գետի սակավաջուր փուլում՝ կեղտաջրերի մեխանիկական մաքրման կայանի արտահոսքերի մուտքից 200մ ներքև, այն գերազանցել է 1700 անգամ: Նշված հատվածների ջրերը չի կարելի օգտագործել ռեկրեացիոն նպատակով:

Համաձայն Վ. Դ. Ռոմանենկոյի՝ (Романенко и др.,1990) մակերևութային ջրերի էկոլոգասանիտարական գնահատման, ըստ կոլի-ինդեքսների արժեքների՝ Ծակքար գետի վերին հոսանքում (ակունք) ջուրը գնահատվել է որպես «բավարար մաքուր», Մարտունի գետում «միանգամայն մաքուր», իսկ Արգիճի գետում՝ «շատ մաքուր»: Գետաբերանի հատվածներում Ծակքար և Արգիճի գետերը դասվել են «բավարար մաքուր», իսկ Կարճաղբյուր գետը՝ «թույլ աղտոտված» ջրերի շարքում: Մարտունի գետը՝ մինչ արտահոսքերի մուտքի դիտակետ՝ գնահատվել է որպես «բավարար մաքուր», իսկ արտահոսքերի մուտքից մոտ 200 մ ներքև՝ «չափազանց կեղտոտ»:

Համաձայն Ժ.Պ. Ամբրազենի (Амбразене, 1974) դասակարգման՝ ըստ 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակի՝ Ծակքար, Կարճաղբյուր և Արգիճի գետերի վերին հոսանքների ջրերը դասվել են «մաքուր», իսկ Մարտունին՝ «թույլ աղտոտված» ջրերի դասին: Արգիճի և Կարճաղբյուր գետերի գետաբերանի հատվածներում ջուրը դասվել է «թույլ աղտոտված», իսկ Ծակքար գետը՝ «մաքուր» ջրերի դասին: Մարտունի գետի ջուրը կեղտաջրերի մեխանիկական մաքրման կայանի արտահոսքերից մոտ 200մ ներքև՝ դասվել է «շատ ուժեղ աղտոտված» ջրերի դասին:

Փոքր Սևանի ռեկրեացիոն գոտիների ջրերի սանիտարական վիճակի գնահատումն ըստ ընդհանուր կոլիֆորմ մանրէների թվաքանակի

Լողափերի սանիտարական վիճակի գնահատման նպատակով ուսումնասիրվել են ընդհանուր կոլիֆորմ մանրէները, որոշվել է կոլի-ինդեքսը (37^{0}C-ում աճեցված աղիքային ցուպիկների քանակը 1լ. ջրում), որը բնութագրում է մարդկանց և կենդանիների կողմից հիդրոհամակարգ ներմուծված միկրոֆլորան:

Ուսումնասիրությունները իրականացվել են 2025թ. հուլիս–օգոստոս ամիսներին՝ հանգստացողներով համեմատաբար ծանրաբեռնված հանրային թիվ 1, թիվ 2, թիվ 3 և թերակղզու լողափերում:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում կոլիֆորմ մանրէներ հայտնաբերվել են բոլոր լողափերում, իսկ կոլի-ինդեքսը փոփոխվել է 100-1500 ԳԱՄ/լ սահմաններում: Համեմատաբար բարձր արժեքներ արձանագրվել են հանրային թիվ 1 և թերակղզու լողափերի ջրերում:

Փոքր Սևանի լողափերի ջրերում գրանցված կոլի-ինդեքսի արժեքները (ԳԱՄ/լ)

Լողափ	Հուլիս	Օգոստոս
Հանրային թիվ 1	100	1500
Հանրային թիվ 2	200	400
Հանրային թիվ 3	250	250
Թերակղզի	730	100

Այսպիսով, ուսումնասիրված լողափերում գրանցված կոլիֆորմ մանրէների արժեքները չեն գերազանցել ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված նորմը (500ԳԱՄ/100մլ):

Հետազոտված լողափերի ջրերը, համաձայն Վ. Դ. Ռոմանենկոյի՝ (Романенко и др.,1990) մակերևութային ջրերի էկոլոգասանիտարական գնահատման, ըստ կոլի-ինդեքսների արժեքների՝ համապատասխանել են «մաքուր»(II դաս) ջրերի դասին:

Չորրորդ եռամսյակ. 2025թ. չորրորդ եռամսյակում հիդրոկենսաբանի կողմից ուսումնասիրվել է Սևանա լիճ թափվող Վարդենիկ գետի տարբեր հատվածների, ինչպես նաև Մասրիկ գետի գետաբերանի ջրերում սապրոֆիտ մանրէների թվաքանակը (աճեցված 37^0C 24 ժամվա ընթացքում և 20^0C՝ 48 ժամ տևողությամբ) և կոլի-ինդեքսը (աղիքային ցուպիկների խմբի մանրէների քանակը 1լ. ջրում): Զուգահեռ նաև ուսումնասիրվել է ջրում լուծված թթվածնի և օրգանական նյութի պարունակությունը՝ ըստ պերմանգանատային օքսիդացման արժեքի: 20^0C-ում և 37^0C-ում աճեցված սապրոֆիտ մանրէների քանակական արժեքների հարաբերակցության հիման վրա որոշվել է գետի ինքնամաքրման ինտենսիվությունը:

Մանրէաբանական հետազոտությունների արդյունքներից ելնելով՝ կատարվել է գետերի ջրերի որակի գնահատում:

Գետ Վարդենիկ

Վերին հոսանք - 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված ապրոֆիտ մանրէների քանակը համապատասխանաբար կազմել է 585 ԳԱՄ/մլ և 30 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 0,8 հզ. ԳԱՄ/լ: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման գործընթացի արժեքը կազմել է 19,5: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 11,4 մգO_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 0,9 մգO/դմ^3 (աղ.):

Աղյուսակ. Սապրոֆիտ մանրէների թվաքանակը, կոլի-ինդեքսը, լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը Վարդենիկ և Մասրիկ գետերի տարբեր հատվածների ջրերում 04.11.2024թ.

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների թվաքանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հազ. ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO_2/դմ^3,	Պերմանգանատային օքսիդացում, մգO/դմ^3
	20°C	37°C			
Գետ Վարդենիկ					
Վերին հոսանք	585	30	0,8	11.4	0,9
Վարդենիկ գյուղի ֆեկալ-կենցաղային հոսքաջրերի մուտքից մոտ 200մ ներքև	20000	7050	228	9.9	3
Ստորին հոսանք	5300	1900	100	11,2	1,9
Գետ Մասրիկ					

գետաբերան	1900	156	6	9,1	1,3

Վարդենիկ գյուղի ֆեկալ-տնտեսական հոսքաջրերի մուտքից մոտ 200մ ներքև - հոսքաջրերը, անարգել թափվելով գետը, այն ենթարկում են խիստ աղտոտման, ինչի արդյունքում վերին հոսանքի համեմատ արձանագրվել է մանրէների քանակական բարձր արժեքներ: Այսպես 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 20000 ԳԱՄ/մլ և 7050 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 228 հզ. ԳԱՄ/լ: Նվազել է ինքնամաքրման ինտենսիվությունը (2,8): Որոշ չափով նվազել է նաև ջրում լուծված թթվածնի պարունակությունը, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը բարձրացել է՝ կազմելով 3 մգO/դմ^3:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության՝ 2018թ. N 09 հրամանի՝ «Ռեկրեացիոն նպատակով ջրօգտագործման վայրերում մակերևութային ջրային ռեսուրսների ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջների» N 2.1.5.001- 18 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին որոշման, ընդհանուր կոլիֆորմ մանրէների (37°C-ում աճեցված աղիքային ցուպիկների խմբի մանրէներ) թվաքանակը չպետք է գերազանցի 500 ԳԱՄ/ 100մլ արժեքը: Նշված արժեք գետի այս հատվածում գերազանցել է ՍԹԿ-ն (սահմանային թույլատրելի կոնցոնտրացիան) 45,6 անգամ:

Ստորին հոսանք – ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ գետի ջրի ինքնամաքրման շնորհիվ 20^{0}C և 37^{0}C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէների թվաքանակը նախորդ դիտակետի համեմատ նվազել է 3,7 անգամ: Նվազել է նաև կոլի-ինդեքսի արժեքը կազմելով՝ 100 հզ. ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 20 անգամ: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման գործընթացի արժեքը կազմել ՝ 2,7: Որոշ չափով բարձրացել է լուծված թթվածնի պարունակությունը, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը նվազել է կազմելով՝ 1,9 մգO/դմ^3:

Մասրիկ գետի գետաբերանից վերցված փորձանմուշը 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված ապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 1900 ԳԱՄ/մլ և 156 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 6 հզ ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 1,2 անգամ: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման արժեքը կազմել է 12,1: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 9,1 մգO_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 1,3 մգO/դմ^3 :

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ մանրէներով առավել աղտոտված են Վարդենիկ գետի ֆեկալ-տնտեսական հոսքաջրերի մուտքի հատվածի և ստորին հոսանքի ջրերը: Սապրոֆիտ մանրէների

միջոցով կատարվող ինքնամաքրման գործընթացի ինտենսիվությունը Վարդենիկ գետի ակունքից դեպի գետաբերան նվազել է (19,5-2,7), իսկ Մասրիկ գետի գետաբերանում այն կազմել է 12,1:

Նախորդ տարիների համեմատ Վարդենիկ գետի ջրերում մանրէների քանակական բաշխվածության պատկերը գրեթե չի փոփոխվել, ինչը պայմանավորված է կեղտաջրերի մշտական մուտքով:

Պերմանգանատային օքսիդացման արժեքը ուսումնասիրված գետերի ջրերում փոփոխվել է 0,9-3 մգO/դմ^3 սահմաններում: Համեմատական բարձր արժեք արձանագրվել է Վարդենիկ գետի հոսքաջրերի մուտքի հատվածում: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը տատանվել է 9,1-11,4 մգO/դմ^3 տիրույթում:

Վարդենիկ գետի ստորին հոսանքում ռեկրեացիոն նպատակով օգտագործվող ջրերի՝ ՀՀ առողջապահության նախարարության սահմանած չափաքանակը գերազանցել է 20 անգամ, իսկ հոսքաջրերի մուտքից մոտ 200մ ներքև՝ 45,6 անգամ: Նշված հատվածների ջրերը չի կարելի օգտագործել ռեկրացիոն նպատակով:

Համաձայն Վ. Դ. Ռոմանենկոյի՝ (Романенко и др.,1990) մակերևույթային ջրերի էկոլոգասանիտարական դասակարգման՝ ըստ կոլի-ինդեքսի արժեքների Վարդենիկ գետի վերին հոսանքում ջուրը գնահատվել է որպես «միանգամայն մաքուր», հոսքաջրերի մուտքից մոտ 200մ ներքև՝ «շատ կեղտոտ», իսկ ստորին հոսանքում՝ «ուժեղ աղտոտված»: Մասրիկ գետի գետաբերանի հատվածում ջուրը դասվել է «բավարար մաքուր» ջրերի շարքում:

Համաձայն Ժ.Պ. Ամբրազենի (Амбразене, 1974) դասակարգման՝ ըստ 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակի՝ Վարդենիկ գետի վերին հոսանքի ջուրը դասվել է «մաքուր», հոսքաջրերի մուտքից մոտ 200մ ներքև՝ «ուժեղ աղտոտված», իսկ ստորին հոսանքում՝ «թույլ աղտոտված» ջրերի դասին: Մասրիկ գետի գետաբերանի հատվածում ջուրը դասվել է «մաքուր» ջրերի դասին:

Արդյունագործական ձկնորսություն

Առաջին և երկրորդ եռամսյակ - ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 30-ի № 94-Ն որոշման համաձայն սահմանվել է Սևանա լճից սիգի արդյունագործական որսի 314 տոննա չափաքանակ՝ փետրվարի 13-ից մինչև մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածի համար: Համաձայն Կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի N1667-Ն որոշման՝ Սևանա լճում սիգ ձկնատեսակի արդյունագործական նպատակներով որս իրականացնելու համար, պայմանագիր կնքելու հայտերը ներկայացվել են ս.թ փետրվարի 10-ը ներառյալ: Լիազոր մարմնի և ՍՊԸ-ների ու «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) միջև Սևանա լճում սիգ ձկնատեսակի արդյունագործական նպատակներով որս իրականացնելու

իրավունքի թույլտվության պայմանագրերը կնքվել են 2025 թվականի փետրվարի 13-ին:

ՇՄՆ-ի հետ կնքված պայմանագրերով 2025թ. թվականի փետրվարի 13-ից մինչև մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում 5 կազմակերպությունների կողմից՝ 987 ձկնորսների միջոցով Սևանա լճում արդյունագործական նպատակով իրականացվել է ձկան որս մուտքի 24 կետերից, որի ընթացքում որսվել է ընդհանուր 309.642 կգ սիգ տեսակի ձուկ:

ՊՈԱԿ-ի և շրջակա միջավայրի նախարարության միջև կնքված պայմանագրով 694 ձկնորսների կողմից 2025 թվականի փետրվարի 13-ից մինչև մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում որսվել է 219.573 կգ սիգ տեսակի ձուկ:

Երրորդ եռամսյակ - ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 26-ի № 865-Ն որոշման համաձայն սահմանվել է Սևանա լճից սիգի արդյունագործական որսի 189 տոննա չափաքանակ՝ հունիսի 30-ից մինչև նոյեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածի համար: Լիազոր մարմնի և չորս ՍՊԸ-ների ու «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև Սևանա լճում սիգ ձկնատեսակի արդյունագործական նպատակներով որս իրականացնելու իրավունքի թույլտվության պայմանագրերը կնքվել են 2025 թվականի հունիսի 30-ին:

ՇՄՆ-ի հետ կնքված պայմանագրերով 2025թ. թվականի հունիսի 30-ից մինչև սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում 5 կազմակերպությունների կողմից՝ 801 ձկնորսների միջոցով Սևանա լճում արդյունագործական նպատակով իրականացվել է ձկան որս մուտքի 23 կետերից, որի ընթացքում որսվել է ընդհանուր 158.989 կգ սիգ տեսակի ձուկ:

ՊՈԱԿ-ի և շրջակա միջավայրի նախարարության միջև կնքված պայմանագրով 491 ձկնորսների կողմից 2025 թվականի հունիսի 30-ից մինչև սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում որսվել է 98.996 կգ սիգ տեսակի ձուկ:

Չորրորդ եռամսյակ – ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 26-ի № 865-Ն որոշման համաձայն չորրորդ եռամսյակում շարունակավել է Սևանա լճում սիգ ձկնատեսակի արդյունագործական որսը և հունիսի 30-ից մինչև նոյեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում 5 կազմակերպությունների կողմից՝ 852 ձկնորսների միջոցով Սևանա լճում արդյունագործական նպատակով իրականացվել է ձկան որս մուտքի 23 կետերից, որի ընթացքում որսվել է ընդհանուր 186.197 կգ սիգ տեսակի ձուկ:

ՊՈԱԿ-ի և շրջակա միջավայրի նախարարության միջև կնքված պայմանագրով 530 ձկնորսների կողմից 2025 թվականի հունիսի 30-ից մինչև նոյեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում որսվել է 116.221 կգ սիգ տեսակի ձուկ:

ՀՀ կառավարության 2025 թվականի հոկտեմբերի 9-ի № 1438-Ն որոշմամբ սահմանվել է Սևանա լճից սիգի արդյունագործական որսի 620 տոննա չափաքանակ՝ հոկտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածի համար: ՇՄՆ-ի հետ կնքված պայմանագրերով 7 կազմակերպությունների կողմից՝ 785 ձկնորսների

միջոցով Սևանա լճում արդյունագործական նպատակով իրականացվել է ձկան որս մուտքի 23 կետերից, որի ընթացքում որսվել է ընդհանուր 607.004 կգ սիգ տեսակի ձուկ:

ՊՈԱԿ-ի և շրջակա միջավայրի նախարարության միջև կնքված պայմանագրով 422 ձկնորսների կողմից 2025 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում որսվել է 331.853 կգ սիգ տեսակի ձուկ:

Կադաստրի վարում և հողաշինարարություն.

Հիմք ընդունելով «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի մոտ կայացած գործակարգավարական խորհրդակցության №2 արձանագրության հանձնարարականը՝ իրականացվում են ստուգայցեր դադարեցված պայմանգրերի տարածքներ՝ փաստացի տիրապետման և գույքով ծանրաբեռնվածության փաստը ստուգելու նպատակով: Առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակներում ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքվել են կառուցապատման և/կամ վարձակալության 32 նոր պայմանագրեր, 24 համաձայնագրեր՝ վարձավճարի փոփոխության, 72 հողօգտագործողների պայմանագրային փաթեթներում կատարվել են տվյալների փոփոխություն, 37 պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցումը դադարեցվել է, կնքվել է 1 ենթավարձակալության պայմանագիր: Կատարված փոփոխությունները փոխանցվել են տվյալների բազա:

Հողօգտագործողների կողմից տարբեր խնդրանքներով (ներդրումային ծրագրեր իրականացնելու, հողամասը օտարելու, նոր պայմանագրեր կնքելու, հողամասը ենթավարձակալությամբ տրամադրելու, գույքի բաժանում կատարելու և այլն) ՊՈԱԿ ներկայացրած դիմումները քննարկվել են ՊՈԱԿ-ի խորհրդի նիստում և դրանց տրվել է համապատասխան ընթացք:

ՊՈԱԿ-ի տնօրենի հրամանով և հանձնարարականներով հանրային № 6, № 8 և № 9 հանրային լողափերում իրականացվել են ստուգման աշխատանքներ:

Պայմանագրով պարտավորությունները չկատարելու հիմքով № 8 և № 9 հանրային լողափերի համար կնքված պայմանագրերը լուծվել են:

Երրորդ եռամսյակում ՊՈԱԿ-ի տնօրենի հանձնարարականի հիման վրա կատարվել է Սևանա լճի ափամերձ տարածքներում օրինական հիմունքներով կառուցված շինությունների գույքագրման, հաշվառման և տվյալների թարմացման աշխատանքներ:

Պարկի տարածքում անտառտնտեսական աշխատանքներ.

Շրջակա միջավայրի նախարարության և ՊՈԱԿ-ի միջև 2024 թվականի հունվարի 18-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» №ՇՄՆ-ԴՇ-24/03 պայմանագրի (այսուհետ' Պայմանագիր), շրջակա միջավայրի նախարարի տեղակալի 2024 թվականի սեպտեմբերի 18-ի Ն/16.11/11975 հանձնարարականի և

«Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման միջոցառումների փաստագրման և մոնիթորինգի իրականացման աշխատանքային խմբի կողմից 2025 թվականի մարտի 5-ին ներկայացված հաշվետվության համաձայն, (ԱԹՍ-ով իրականացված օրթոֆոտոնկարահանումների աշխարհատեղեկատվական վերլուծությունների արդյունքում) փաստագրվել է 2024 թվականի սեպտեմբերի 24-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 30-ը Դրախտիկ տեղամասի 1-ին պահաբաժնի 8, 9, 10 և 11-րդ քառակուսիներում №ՇՄՆ-ԴՇ-24/03 Պայմանագրին համաձայն իրականացված մաքրման աշխատանքների ծավալները: Արդյունքում փաստագրվել է 13,3 հա մաքրված տարածք: 2024 թվականի դեկտեմբերի 30-ի փայտանյութի հանձնման-ընդունման №2 կատարողական ակտի շրջանակում, մաքրման աշխատանքների արդյունքում պահեստ տեղափոխված շինափայտի ծավալները կազմել են 12 մ^3, որից բարդի տեսակի խոշոր տրամագծի 1 մ^3 , բարդի տեսակի միջին տրամագծի 2.69 մ^3, բարդի տեսակի մանր տրամագծի 2մ^3, շինափայտ սոճի տեսակի միջին տրամագծի՝ 3 մ^3, սոճի տեսակի մանր տրամագծի՝ 3 մ^3, և շինափայտ թեղի տեսակի միջին տրամագծի 0.31 մ^3:

Վառելափայտի ծավալները կազմել են 192.05 մ^3 չխտացված, որից 5 մ^3 չիչխան տեսակի, իսկ 1.5 մ^3 հացի տեսակի, խնձորենի տեսակի 0.55 մ^3, բարդի տեսակի 40 մ^3, փշատենի տեսակի 10մ^3 թեղի տեսակի 106 մ^3 և սոճի տեսակի 29մ^3:

Հատատեղում կուտակված է 46 մ^3 ջախ (չխտացված):

Իրականացվում են փայտանյութի վաճառքի աշխատանքներ:

Համաձայն շրջակա միջավայրի նախարարության և ՊՈԱԿ-ի միջև 2025 թվականի հունվարի 22-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» №ՇՄՆ-ԳՇ-25/03 պայմանագրի՝ ՊՈԱԿ-ի գիտական հետազոտությունների, մշտադիտարկման և կադաստրի վարման բաժնի աշխատակիցների կողմից «Սևան» ազգային պարկի Մարտունի տարածքի Մատրունի տեղամասի 1-ին պահաբաժնի 2-րդ 3-րդ, 2-րդ պահաբաժնի 4-րդ , 5-րդ ,3-րդ պահաբաժնի 6-րդ, 12-րդ, 4-րդ պահաբաժնի 13-րդ 14-րդ և 21-րդ, 5-րդ պահաբաժնի 30-րդ 31-րդ 47-րդ, 6-րդ պահաբաժնի 48-րդ 49-րդ 52-րդ և Երանոս տեղամասի 5-րդ պահաբաժնի 44-րդ քառակուսիներում իրականացվել է Սևանա լճի ջրածածկ և ջրածածկման ենթակա անտառտնկարկների մաքրման տարածքների նշահարման, ծառերի համարակալման և հաշվեգնահատման աշխատանքներ: Մաքրման ենթակա է ընդհանուր' 43.95 հա, որից' 13.02 հա ճահճապատ, 9.04 հա ջրածածկ, 21.89 ծառաթփային բուսականությամբ առկա տարածքներ, ընդհանուր մաքրման տարածքում առկա է նաև 11.36 հա խոտածածկ և 4.95 ավազե քարքարոտ ափամերձ տարածքներ, որոնք ենթակա չեն մաքրման: Նախատեսված մաքրման գոտում առկա է ընդհանուր 975 տարբեր տեսակի և տրամագծի ծառեր, որոնք պետք է արմատախիլ արվեն: Մաքրման արդյունքում տեսականու սպասվելիք ելքը թփատեսակների հետ միասին կազմում է 242.062 խիտ խմ:

Համաձայն «Սևան» ազգային» պարկի հողամասի վարձակալ հանդիսացող «Կոկակաբանա» ՍՊ-ի լիազոր անձ Սարգիս Մնացականյանի 2025թ. հունվարի 17-ի դիմումի հիման վրա կատարվել է այց ՍՊԸ-ի կողմից վարձակալած տարածք, որը գտնվում է Սևան տեղամասի 1-ին պահաբաժնի 3-րդ քառակուսու՝ Սևանա լճի ափամերձ հատվածում: Տարածքում առկա բարդի տեսակի ծառերը բարձրահասակ և թեքված են եղել: Իրենցից վտանգ ներկայացնող ծառերը համարակալվել են, կազմվել է հաշվեգնահատման ցուցակ և հատատեղի անձնագիր և ուղարկվել են շրջակա միջավայրի նախարարություն՝ ծառերի էտման աշխատանքների համար թույլտվություն ստանալու համար:

Առաջին եռամսյակում ՊՈԱԿ-ի Սևանի և Մարտունու տարածքներից իրականացվել է նախորդ տարիներից սանիտարական հատումներից հատատեղերում մթերված փայտանյութի մնացորդների իրացման աշխատանքներ:

Կովկասի Բնության Հիմնադրամի, շրջակա միջավայրի նախարարության և ՊՈԱԿ-ի միջև 2025 թվականի մարտի 1-ին կնքվել է №CNF/2025/GA-PA-AM-06 դրամաշնորհի պայմանագիր: Պայմանագրի շրջանակներում ՊՈԱԿ-ի կողմից հասունացող և չորացող սոճուտներում անտառվերականգնման աշխատանքներ իրականացնելու նպատակով Սևան տարածքի Ախթամար տեղամասի երկրորդ պահաբաժնի 15-րդ քառակուսու 7-րդ և 9-րդ հատվածների (8 հա մակերես) վրա տնկվել է 24.000 հատ ծառ: Նշված հատվածներում լայանտերևավոր տեսակներով լրացման աշխատանքներ իրականացվելու նպատակով ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է գնման ընթացակարգ «Ծառեր» և «Ծառերի տնկում» ծառայություններ ձեռք բերելու համար: Գնման ընթացակարգերի ամփոփման արդյունքում հաղթող են ճանաչվել «Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամը և «Ինեքս» ՍՊԸ-ն:

Տնկվել են 24.000 տնկիներ՝ կեչի լիտվինովի բաց արմատային համակարգով 6000 հատ, տանձենի կովկասյան բաց արմատային համակարգով 6000 հատ, հացենի սրապտուղ բաց արմատային համակարգով 6000 հատ, վայրի խնձորենի բաց արմատային համակարգով 6000 հատ: Իրկանացվել են փոսերով տնկված սերմնաբուսակների ձեռքով խնամքի աշխատանքներ՝ սերմնաբուսակների շրջակայքում հողի փխրեցում և մոլախոտերի հեռացում, բաժակների տրամագիծը 0,5 մ: Երկրորդ եռամսյակում նշված աշխատանքներն իրականացվել են մեկ անգամ: Սերմնաբուսակների միջշարքային և միջբուսային հատվածներում իրականացվել է ձեռքով խոտհունձ, խոտի հավաքում և հեռացում՝ մեկ անգամ, երրորդ եռամսյակում ևս կատարվել է մեկ անգամ: Փոսերով տնկված անտառմշակույթի ոռոգում բաժակներում՝ իրականացվել է մեկ անգամ, երրորդ եռամսյակում՝ 2 անգամ:

Համաձայն վերը նշված №ՇՄՆ-ԳՇ-25/03 պայմանագրի՝ «Սևան» ազգային պարկի Մարտունի տարածքի Մատրունի տեղամասի 1-ին պահաբաժնի 2-րդ 3-րդ, 2-րդ պահաբաժնի 4-րդ , 5-րդ, 3-րդ պահաբաժնի 6-րդ, 12-րդ, 4-րդ պահաբաժնի 13-րդ 14-րդ և 21-րդ, 5-րդ պահաբաժնի 30-րդ 31-րդ 47-րդ, 6-րդ պահաբաժնի 48-րդ 49-րդ

52-րդ և Երանոս տեղամասի 5-րդ պահաբաժնի 44-րդ քառակուսիների անտառմաքրման աշխատանքների իրականացման համար ՊՈԱԿ-ի տնօրենի 2025 թվականի ապրիլի 14-ի № 71-Լ հրամանով դուրս է գրվել 000015, 000016, 000017, 000018, 000019 անտառհատման տոմսերը: Աշխատանքներն իրականացվում են Սևանա լճի ջրածածկ և ջրածածկման ենթակա անտառտնկարկների մաքրման, ապօրինի շենք-շինությունների ապամոնտաժման խմբի կողմից՝ համարակալված ծառերի հատում, անտառանյութի մասնատում, անտառանյութի տեղափոխում պահեստ, թփերի, մացառների և կոճղերի արմատախիլ անում, էքսկավատորով կոճղերի, ջախի, թփերի և արմատային զանգվածի բարձում բեռնատար մեքենային և այդ ամենը տեղափոխվում և դատարկվում է կուտակման համար առանձնացված վայր: Հունիսի 30-ի դրությամբ մաքրվել է շուրջ 8.5 հա տարածք, որը կատարողական ակտով դեռևս չի հանձնվել: Աշխատանքները շարունակվում են:

ՊՈԱԿ-ի տնօրենի 2025 թվականի ապրիլի 16-ի № 73-Լ հրամանով դուրս գրված 000020 անտառհատման տոմսի համաձայն Սևան տարածքի Ախթամարի տեղամասի 15-րդ քառակուսում հատվել են թվով 59 սոճի տեսակի ծառեր, հատատեղում մթերվել է 5,09 խմ շինափայտ, 17,82 խմ (չխտացված) վառելափայտ և 2,94 խմ (չխտացված) ցախ և ճյուղիկներ:

ՊՈԱԿ-ի տնօրենի 2025 թվականի ապրիլի 18-ի № 75-Լ հրամանով դուրս գրված 000021 անտառհատման տոմսով նախատեսված Սևանի տեղամասի 3-րդ քառակուսում էտվել է 88 բարդի և 2 թեղի տեսակի ծառեր: Մթերվել է 1,73 խմ շինափայտ, 22,14 խմ (չխտացված) վառելափայտ և 2,07 (չխտացված) ցախ և ճյուղիկներ:

ՊՈԱԿ-ի տնօրենի 2025 թվականի մայիսի 19-ի № 98-Լ հրամանով դուրս գրված 000022 անտառհատման տոմսով նախատեսված Վարդենիս տարածքի Վարդենիս տեղամասի 21-րդ քառակուսում հատվել է թվով 13 սոճի տեսակի քամատապալ ծառեր: Արդյունքում հատատեղում մթերվել է 3,26 խմ շինափայտ, 6,94 խմ (չխտացված) վառելափայտ և 1,36 խմ (չխտացված) ցախ և ճյուղիկներ:

Ընթանում են հատատեղերում մթերված փայտանյութի վաճառքի աշխատանքներ:

Հիմք ընդունելով աշխատանքային խմբի կողմից 2025 թվականի ապրիլի 25-ին ներկայացված հետազոտման ակտը, շրջակա միջավայրի նախարարի տեղակալի 2025 թվականի հունիսի 4-ի № Ն/16.3/6734 հանձնարարականը՝ ՊՈԱԿ-ի տնօրենի 2025 թվականի հունիսի 10-ի ի № 129-Լ հրամանով դուրս է գրվել թվով 42 անտառհատման տոմսեր՝ 000023-ից մինչև 000064 համարները, որոնցով իրականացվելիք հատման և էտման աշխատանքները նախատեսված է իրականացնել 13 տեղամասերում 2025 թվականի ընթացքում՝ հատվող և էտվող ծառերի քանակը 4799 է: Հատումներից սպասվելիք ելքը ընդամենը 756,636 խիտ/խմ է, որից 65,25 խմ շինափայտ:

Ապրիլ ամսին ՊՈԱԿ-ի Մարտունու տնկարանում դրվել են 10 000 հատ բարդու նոր կտրոններ: Ներկայումս տնկարանում խնամվում են շուրջ 30 000 տնկիներ:

Երրորդ եռամսյակ - Համաձայն շրջակա միջավայրի նախարարության և ՊՈԱԿ-ի միջև 2025 թվականի հունվարի 22-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» №ՇՄՆ-ԳՇ-25/03 պայմանագրի՝ «Սևան» ազգային պարկի Մարտունի տարածքի Մատրունի տեղամասի 1-ին պահաբաժնի 2-րդ 3-րդ, 2-րդ պահաբաժնի 4-րդ , 5-րդ, 3-րդ պահաբաժնի 6-րդ, 12-րդ, 4-րդ պահաբաժնի 13-րդ 14-րդ և 21-րդ, 5-րդ պահաբաժնի 30-րդ 31-րդ 47-րդ, 6-րդ պահաբաժնի 48-րդ 49-րդ 52-րդ և Երանոս տեղամասի 5-րդ պահաբաժնի 44-րդ քառակուսիների անտառմաքրման աշխատանքների իրականացման համար ՊՈԱԿ-ի տնօրենի 2025 թվականի ապրիլի 14-ի № 71-Լ հրամանով դուրս գրված 000017, 000018, 000019 անտառհատման տոմսերով աշխատանքներն ավարտվել են: Արդյունքում ջրածածկ և ջրածածկման ենթակա անտառտնկարկներից մաքրվել է շուրջ 27 հա տարածք, որը կատարողական ակտով դեռևս չի հանձնվել: Մաքրման աշխատանքներից պահեստ է տեղափոխվել շուրջ 165 մ^3 վառելափայտ (չխտացված), շուրջ 28 մ^3 շինափայտ, շուրջ 100 մ^3 ցախ և ճյուղիկներ (չխտացված) կուտակվել են հատատեղերում: Մաքրման տարածքներից մեքենամեխանիզմներով բեռնվել և դեպի կուտակման համար առանձնացված վայր է տեղափոխվել շուրջ 4000 մ^3 (չխտացված) ծավալով արմատային զանգված հողախառնուրդի հետ միասին: №000015 և №000016 անտառհատման տոմսերով նախատեսված ջրածածկ և ջրածածկման ենթակա անտառտնկարկների մաքրման աշխատանքները շարունակվում են:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2025 թվականի հունիսի 10-ի «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Սևանի, Ախթամարի, Նորատուսի, Այրիվանի, Ծովինարի, Վարդենիկի, Մարտունու, Երանոսի, Փամբակի, Ծովակի, Վարդենիսի, Դրախտիկի և արտանիշի տեղամասերի համապատասխան քառակուսիներում իրականացվելիք բնափայտի մթերման ծավալները հաստատելու մասին» №129-Լ հրամանով դուրս գրված № 000035, 000036, 000037, 000038, 000039, 000040, 000041, 000042 և 000055 անտառհատման տոմսերով երրորդ եռամսյակում հատվել է սանիտարական հատման ենթակա թվով 595 թեղի, սոճի և բարդի տեսակի ծառեր: արդյունքում հատատեղերում մթերվել է 31,84 մ^3 շինափայտ, 294,9 մ^3 վառելափայտ (չխտացված) և 29,5 մ^3 ցախ և ճյուղիկներ (չխտացված): Ներկայումս հատատեղից իրականացվում է նշված փայտանյութի վաճառքի աշխատանքներ: 2025 թվականի համար սանիտարական հատման նշանակված հատատեղերի շահագործման աշխատանքները շարունակվում են:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2025 թվականի հուլիսի 14-ի «Սևան» ազգային պարկի անտառներում սանիտարական վիճակը բարելավելու նպատակով սանիտարական հատումներ իրականացնելու մասին» № 161-Լ հրամանով «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տեղամասերում 2026 թվականի

հատատեղերը հաստատելու նպատակով հայտնաբերվել է սանիտարական հատման ենթակա շուրջ 2100 տարբեր տեսակի ծառեր: ՀՀ կառավարության 2024 թվականի փետրվարի 29-ի № 294-Ն որոշման հատատեղերի հատկացման կարգի 6-րդ կետի համաձայն ըստ անտառմասերի իրականացվել է ծառերի համարակալման, պիտակների ամրացման աշխատանքներ հաշվեգնահատման ցուցակներ և հատատեղի անձնագրեր: Իրականացվում է ամփոփիչ հաշվարկման աշխատանքներ շրջակա միջավայրի նախարարությանը համաձայնեցման ներկայացնելու նպատակով:

Չորրորդ եռամսյակ.

Համաձայն պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին 2025թ. հունվարի 22-ին կնքված ՇՄՆ-ԴՇ-25/03 պայմանագրի, 2025 թվականի մարտի 3-ին հաստատված № 1 համաձայնագրի, շրջակա միջավայրի նախարարի տեղակալի 2025 թվականի մարտի 6-ի № Ն/16.11/2509 հանձնարարականի և «Սևան» ազգայի պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2025 թվականի ապրիլի 14-ի 71-Լ հրամանով դուրս գրված 000015, 000016 000017 000018 0000019 անտառհատման տոմսերով նախատեսված «Սևան» ազգային պարկի Մարտունի տարածքի Մարտունու տեղամասի 2, 3, 4, 5, 6, 12, 13, 14, 21, 30, 31, 41, 47, 48, 49, 52 և Երանոս տեղամասի 44-րդ քառակուսիներում ջրածածկ և ջրածածկման ենթակա՝ ճահճապատ, ջրածածկ և ծառաթփային բուսականությամբ առկա անտառտնկարկների մաքրման աշխատանքների համար նախատեսված 43,95 հա-ից մաքրվել է 30,185 հա, որից՝ 1 հա ջրածածկ տարածք, 9,5908 հա ճահճապատ տարածք և 19,5942 հա ծառաթփային բուսականությամբ տարածք: Մաքրման ենթակա տարածքում հատվել են չիչխանի թփեր, սոճի, փշատենի, բարդի տեսակի ծառեր, որոնցից առաջացած փայտանյութի ծավալը կազմել է 313,883 մ^3 փայտանյութ (չխտացված), որից շինափայտ՝ 28,463 մ^3, վառելափայտ՝ 179,13 մ^3 (չխտացված), ցախ և ճյուղիկներ 106,29 մ^3 (չխտացված): Շինափայտը և վառելափայտը ամբողջությամբ տեղափոխվել են պահեստ և դարսվել կանոնավոր դարսակույտերով: Ցախը և ճյուղերը կուտակվել են մաքրման տարածքում, իսկ կոճղերը հողախառնուրդի և արմատային զանգվածի հետ միասին դուրս բերվել մաքրման տարածքից (շուրջ 1200,7 մ^3՝ չխտացված): Կազմվել է կատարողական ակտ և ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարություն:

Շրջակա միջավայրի նախարարի 2025 թվականի մայիսի 2-ի № 166-Ա «Սևանա լճի ջրածածկ և ջրածածկամն անտառտնկարկների մաքրման միջոցառումների փաստագրման և մոնիթորինգի իրականացման աշխատանքային խումբ ստեղծելու, դրա անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» հրամանով ստեղծված մասնագիտական աշխատանքային խումբը համապատասխան տեխնիկական միջոցներով՝ ըստ կատեգորիաների ստուգել են մաքրված տարածքների մակերեսները, ինչպես նաև պահեստում կանոնավոր դարսակույտերով դարսված փայտանյութի ծավալները (կատարողական ակտը դեռևս

չի ընդունվել):

Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2025 թվականի հունիսի 10-ի «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Սևանի, Ախթամարի, Նորատուսի, Այրիվանի, Ծովինարի, Վարդենիկի, Մարտունու, Երանոսի, Փամբակի, Ծովակի, Վարդենիսի, Դրախտիկի և արտանիշի տեղամասերի համապատասխան քառակուսիներում իրականացվելիք բնափայտի մթերման ծավալները հաստատելու մասին» №129-Լ հրամանով դուրս գրված № 000026, 000027, 000028, 000029, 000030, 000031, 000032, 000033, 000034, 000043, 000044, 000045, 000046 և 000060 անտառհատման տոմսերով չորրորդ եռամսյակում հատվել է սանիտարական հատման ենթակա թվով 1736 սոճի և բարդի տեսակի ծառեր: Արդյունքում հատատեղերում մթերվել է 7,5 մ^3 շինափայտ, 32,6 մ^3 տեխնոլոգիական փայտ՝ սոճի և բարդի տեսակի (չխտացված), 212 մ^3 վառելափայտ (չխտացված) և 29 մ^3 ցախ և ճյուղիկներ (չխտացված): Ներկայումս հատատեղից իրականացվում է նշված փայտանյութի վաճառքի աշխատանքներ: 2025 թվականի համար սանիտարական հատման նշանակված հատատեղերի շահագործման աշխատանքները շարունակվում են:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2025 թվականի հուլիսի 14-ի «Սևան» ազգային պարկի անտառներում սանիտարական վիճակը բարելավելու նպատակով սանիտարական հատումներ իրականացնելու մասին» № 161-Լ հրամանով «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տեղամասերում 2026 թվականի հատատեղերը հաստատելու նպատակով հայտնաբերված սանիտարական հատման ենթակա շուրջ 2100 տարբեր տեսակի ծառերի հաշվեգնահատման ցուցակները և հատատեղի անձնագրերը ներկայացվել են համաձայնեցման շրջակա միջավայրի նախարարությանը: Նշված աշխատանքներն ստուգելու նպատակով ՇՄՆ բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ Արմեն Գրիգորյանը, անտառային քաղաքականության վարչության մասնագետ Նարեկ Քոչարյանը և այլ մասնագետներ 2025 թվականի նոյեմբերի 10-ից մինչև նոյեմբերի 14-ն ներառյալ Նորատուսի, Այրիվանի, Երանոսի, Մարտունու, Վարդենիսի, Ծովակի, Արեգունու, Արտանիշի, Դրախտիկի, Ախթամարի և Սևանի տեղամասերում կատարել են ստուգումներ: Արդյունքում մասնագետների կողմից էական թերություններ չեն հայտնաբերվել, սակայն 2026 թվականի ընտրովի սանիտարական հատումներ իրականացնելու նպատակով մասնագետների կողմից առաջարկվել է տեղամասերում ևս մեկ անգամ կատարել ուսումնասիրություններ հայտնաբերելու քամատապալ, ձյունակոտոր, ցցաչոր և հողմահարված ծառեր, որոնք չեն հայտնաբերվել նախորդ ուսումնասիրությունների ժամանակ: Նշված աշխատանքները «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի աշխատողների կողմից կատարվել են և սանիտարական հատման ենթակա լրացուցիչ ծառերի հայտնաբերման և հաշվեգնահատման աշխատանքներ: Արդյունքում համարակալվել

և հաշվեգնահատվել են սանիտարական հատման ենթակա թվով 2189 ծառ, որից 754-ը՝ բարդի, 463-ը՝ թեղի, 96-ը՝ սոճի, 4-ը փշատենի, 3-ը՝ ուռի և 1-ը՝ հացի տեսակի են: Նշված ծառերը կհատվեն 2026 թվականի սանիտարական հատման հատատեղերի շրջանակում:

Չորրորդ եռամսյակում Գնման ընթացակարգով «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և «Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամի միջև կնքված պայմանագրի շրջանակներում ձեռք է բերվել 9000 տնկիներ որից՝ 3000 հատ հացենի սովորական, 3000 հատ թխկի բարձրլեռնային, 3000 հատ տանձենի կովկասյան:

Գնման ընթացակարգի շրջանակներում ՊՈԱԿ-ի և «ՍԵՄ ՍՊԱՐ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրով ձեռք է բերվել ծառերի տնկման ծառայություններ, որի արդյունքում ՊՈԱԿ-ի Սևանի տարածքի Ախթամար տեղամասի 9,5 հա տարածքի 5 հա բացատներում տնկվել է 12000 տնկի, որից 9000-ը ձեռք բերված տնկիներն են, իսկ 3000-ը ՊՈԱԿ-ի Մարտունու տնկարանում աճեցված բարդի և ուռենի տեսակի տնկիներն են:

«Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից համայնքների բնակչության շրջանում բացատրական աշխատանքների իրականացում, այցելուների կենտրոնի և տարածքի այցելուներին տեղակատվության տրամադրում.

ՊՈԱԿ-ի գործունեության առավել կարևոր մանրամասների վերաբերյալ սահմանակից համայնքների բնակչությունը և հանրությունը իրազեկվել է ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքէջից և ֆեսբուքյան էջից:

Առաջին և երկրորդ եռամսյակների ընթացքում Այցելուների կենտրոնը կազմակերպել է հետևյալ միջոցառումները՝ «Սևանա լիճն այսօր» էքսկուրսիա և ֆիլմի դիտում, «Ձմեռող թռչուններ» և «Գետերը լճի երակներն են» քննարկումներ, «Թիթեռներ», «Ջուրը մարդու կյանքում» (ջրի համաշխարհային օր) ֆիլմերի դիտում, Թռչունների միջազգային օր. «Հայկական որորը տարվա թռչուն», Կենսաբազմազանության միջազգային օր. «Արշավ դեպի Սևանա լիճ» ֆիլմի դիտում, ՍԱՊ Կենսաբազմազանության վերաբերյալ ցուցահանդես, Թանգարանների միջազգային օր «Նկարում են փոքրիկները», Շրջակա միջավայրի համաշխարհային օր «Թափոնների վերամշակում» և «Սևանը օղակող լեռնաշղթաները» միջոցառում:

Երրորդ եռամսյակի ընթացքում ՊՈԱԿ-ի Այցելուների կենտրոնը կազմակերպել է հետևյալ միջոցառումները՝ «Միջատների դերը բնության մեջ» և ուսուցողական դասընթաց-էքսկուրսիա, Բնության պահպանության օր. «Խոնավ տարածքներ» ֆիլմի դիտում-քննարկում, «Էնդեմիկ ձկնատեսակներ» սեմինար, ԲՀՊՏ-ների օր. «ՍԱՊ դեղաբույսեր» սեմինար,Հուշ-ցերեկույթ նվիրված

քանդակագործ Էդիկ Բադալյանին և «Սևանա լճի ջրիմուռները» ուսուցողական էքսկուրսիա:

Չորրորդ եռամսյակի ընթացքում Այցելուների կենտրոնում կազմակերպվել են հետևյալ միջոցառումները. «Լճաշենի պեղումները» սեմինար-քննարկում, «Սևանա լճի քիմիական բաղադրությունը» ուսուցողական քննարկում, «Երկկենցաղներ. Կրիա» ֆիլմի դիտում, «Սևան» ազգային պարկի տարածքում առկա հուշարձաններ» էքսկուրսիա և գեղանկարների ցուցահանդես, «Ձկնապաշարների գերօգտագործում» սեմինար, «Ջրի պաշտամունքը «Սասունցի Դավիթ» էպոսում» ցուցահանդես:

Այցելուների կենտրոնը առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների ընթացքում ունեցել է 3911 այցելու, որից 1554-ը մասնակցել են վերոնշյալ միջոցառումներին:

2. Մշտադիտարկման բաժին.

Բաժնի աշխատողների կողմից կազմվել և ՇՄՆ է ներկայացվել 33 զեկուցագրեր, որոնցից 11-ը Շրջակա միջավայրի նախարարի հանձնարարությամբ Էկոպարեկային ծառայության կողմից արձագանք է ստացել: Ուսումնասիրվել և գույքագրվել են մոտ 110 վարձակալական տարածքներ:

Պարբերաբար իրականացվել են շրջայցեր «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Նորաշենի արգելոց-արգելավայր: Տեղում, մշտադիտարկման արդյունքում, հնարավորինս կանխվել են հնարավոր խնդիրները և կանոնակարգվել է ռեժիմի պահանջները: Մշտադիտարկման նպատակով իրականացվել են այցեր Մարտունու տեղամաս՝ մաքրման աշխատանքներին հետևելու համար և աշխատանքներն ավարտելուց մշտադիտարկման բաժնի հողաշինարարը իրականացրել է մաքրված տարածքների տվյալների ամփոփում՝ շուրջ 30 հա տարածք: ԱԱԾ-ի կողմից ստացված 4-րդ, որում նշված է 19 վարձակալված տարածք, 5-րդ, որում նշված է 22 վարձակալած տարածք և 9-րդ, որում նշված է 116 վարձակալած տարածք, ցուցակները ուսումնասիրվել, և բաժնի մասնագետների կողմից տեղում ճշտվել են բոլոր անհրաժեշտ տվյալները՝ իրականացնելով ֆոտոլուսանկարահանում, որոնց արդյունքում ներկայացվել են ամփոփ տեղեկանքներ:

ՊՈԱԿ-ի հողաշինարարի կողմից՝ ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում իրականացվել է չափագրման, քարտեզագրման և նշահարման աշխատանքներ, իրականացվել է ՊՈԱԿ-ի վարձակալների վարձակալած տարածքների սահմանների ճշտման աշխատանքներ: Կատարվել է քաղաքացիների կողմից ՊՈԱԿ մուտքագրված դիմումներին կից իրադրության հատակագծերի ուսումնասիրություն:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից ստացված գրությունների հիման վրա հողաշինարարը մասնակցել է մի շարք գնահատման հայտերի հանրային լսումների:

3. Իրավական ապահովման բաժին.

Առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների ընթացքում ՊՈԱԿ է ստացվել 2951 գրություն, որից 539-ը՝ շրջակա միջավայրի նախարարությունից, 2412-ն՝ այլ իարավաբանական և ֆիզիկական անձանցից: Նշված գրությունները Գործավարության կարգին համապատասխան ժամանակին և պատշաճ ձևով մուտքագրվել են գրանցամատյաններում, այնուհետև հանձնվել են տնօրենին՝ մակագրության: Մակագրված գրությունները պատճենահանվել են և հանձնվել են համապատասխան բաժիններ: Իրականացվել է հսկողություն դրանց՝ սահմանված ժամկետներում պատասխանելու ուղղությամբ: Ելքագրվել է 3262 գրություն, որից 326-ը՝ շրջակա միջավայրի նախարարություն:

Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով պատրաստվել են տարաբնույթ դիմումներ և գրություններ:

Մարդկային ռեսուրսների կառավարում. Առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների ընթացքում կազմվել է 297 անհատական/ներքին իրավական ակտեր և 24 աշխատանքային պայմանագիր, որից՝ 24-ն աշխատանքային պայմանագիրը լուծելու, 28-ը խրախուսելու, 97-ն արձակուրդ տրամադրելու, որից 87-ը նվազագույն ամենամյա արձակուրդ, 9-ը չվճարվող, 1-ը մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ, 1-ը հայրության արձակուրդ, 63-ն աշխատողին գործուղելու, 65-ն այլ ներքին իրավական ակտերի և 2-ը կարգապահական տույժի վերաբերյալ:

ՊՈԱԿ-ում աշխատանքի է ընդունվել 24 մարդ, աշխատանքից ազատվել է 32 մարդ:

Իրավաբան. Պայմանագրերով սահմանված պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար 68 ֆիզիկական կամ իրավաբանական անձանց ներկայացվել են պայմանագրերը լուծելու առաջարկներ, որից՝ 42-ը վարձավճարներն ուշացնելու համար, 24-ը ներդրումային պարտավորությունները սահմանված ժամկետում չկատարելու համար, 2-ը՝ հողամասը ոչ նպատակային օգտագործելու համար:

Հանրային լողափերի բարեկարգման, սպասարկման և կահավորման պայմանագրերով սահմանված ներդրումային պարտավորությունների, ինչպես նաև պայմանագրերի էական պայմանների խախտման հիմքով 3 տնտեսվարողի ներկայացվել են պայմանագրերի լուծման առաջարկներ:

Դատախազության գրության հիման վրա ՊՈԱԿ-ի և ոստիկանության աշխատակիցների կողմից Սևանա լճի ափամերձ տարածքների վարձակալության օրինականության վիճակի ուսումնասիրության արդյունքներով 3 տնտեսվարողի ներկայացվել են պայմանագրերի լուծման առաջարկներ:

Կազմվել են 528 ծանուցումներ, որից 18-ը՝ կադաստրային արժեքների բարձրացման հետ կապված վարձավճարների փոփոխման, 4-ը՝ պայմանագրով սահմանված վարձավճարները խորհրդի կողմից սահմանված նվազագույն գներին

համապատասխանեցնելու, 34-ը՝ նիշից ցածր տարածքներում առկա ինքնակամ շինությունների ապամոնտաժման, 349-ը՝ լողամիջոցի շահագործման պայմանագրերի կնքման, 26-ը՝ տարածքի սանիտարահիգենիկ վիճակը ամահովելու նպատակով աղբահանության պայմանագրերի կնքման անհրաժեշտության, 2-ը՝ սեփականության իրավունքով պատկանող շինությունով ծանրաբեռնված հողամասի վարձակալության պայմանագրի կնքման, 95-ը՝ նախկինում կայացած մրցույթի արձանագրության հիման վրա նոր պայմաններով հողօգտագործման պայմանագրի կնքման վերաբերյալ:

Կազմվել է 221 պայմանագրեր, որից 5-ը՝ հանգստի և զբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների, 50-ը՝ տաղավարների ժամանակավոր տեղադրման, 16-ը ջրային զբոսաշրջության նպատակով պարկի ջրային տարածքի շահագործման, 36-ը՝ խոտունձի իրականացման, 69-ը՝ անասուների արածեցման, 35-ը փեթակի տեղադրման, 10-ը՝ աղբամանների և պառկելաթախտերի վարձակալության:

Մշակվել և հաստատման է ներկայացվել ՊՈԱԿ-ի 2025 թվականի քաղաքացիական պաշտպանության պլանը և «Զբոսաշրջության նպատակով «Սևան» ազգային պարկի ջրային տարածք լողամիջոցի մուտքի և մուտքավճարի» կարգը:

Կազմակերպվել է ՊՈԱԿ-ի խորհրդի հարցման կարգով 13 նիստ:

ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ են ներկայացվել՝

1) 42 հայցադիմում, ընդհանուր՝ 89 233 260,53 դրամ գումարի բռնագանձման պահանջով, որոնցից 7-ը՝ նաև պայմանագիրը միակողմանի վաղաժամկետ լուծման պահանջով,
2) 34 դիմում կատարողական թերթը հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ներկայացնելու մասին,
3) 5 դիմում վճռի օրինական ուժը 2-րդ կնիքով հաստատելու մասին,
4) 7 դիմում վեճն ըստ էության սպառված լինելու վերաբերյալ,
5) 1 միջնորդություն հայցի հիմքի և առարկայի փոփոխություն կատարելու վերաբերյալ,
6) 12 քաղաքացիական գործով ապացույց,
7) 1 քաղաքացիական գործով դիրքորոշում, որպես ինքնուրույն պահանջ չներկայացնող 3-րդ անձ,
8) 1 քաղաքացիական գործով առարկություն՝ Պատասխանողի կողմից ներկայացված հայցային վաղեմության միջնորդության դեմ:
9) 1 քաղաքացիական գործով դիրքորոշում հայցադիմումի պատասխանի վերաբերյալ
10) 2 քաղաքացիական գործով հաշտության համաձայնություն

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն է ներկայացվել՝

1 հաշտության համաձայնություն՝ դատարան ներկայացնելու համար,

75 դիմում ավարտված կատարողական վարույթները վերսկսելու վերաբերյալ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան է ներկայացվել՝

3 քաղաքացիական գործով վերաքննիչ բողոք,

1 քաղաքացիական գործով հաշտության համաձայնություն:

ՀՀ Վճռաբեկ դատարան է ներկայացվել

1 վճռաբեկ բողոք
ՀՀ սնանկության դատարան է ներկայացվել
1 դիմում պահանջատեր գրանցելու վերաբերյալ:

Կազմվել են շուրջ 290 գրություններ և գրությունների/դիմումների պատասխաններ:

Մասնակցություն 46 քաղաքացիական և քրեական գործերով դատական նիստերի:

3. Ֆինանսատնտեսագիտական բաժին.

Առաջին և երկրորդ եռամսյակ - Համաձայն շրջակա միջավայրի նախարարության և ՊՈԱԿ-ի միջև 2025 թվականի հունվարի 22-ին կնքված N ՇՄՆ-ԴՇ-25/03 պայմանագրի՝ պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման, Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման համար 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՊՈԱԿ-ին փաստացի տրամադրվել է 74289.9 հազար ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), որից 24221.6 հազար ՀՀ դրամը (ներառյալ ԱԱՀ), ուղղվել է մաքրման աշխատանքների իրականացմանը, իսկ 50068.3 հազար ՀՀ դրամը (ներառյալ ԱԱՀ) ուղղվել է ՊՈԱԿ-ի աշխատակիցների վարձատրությանը:

Երրորդ եռամսյակ - Համաձայն շրջակա միջավայրի նախարարության և ՊՈԱԿ-ի միջև 2025 թվականի հունվարի 22-ին կնքված N ՇՄՆ-ԴՇ-25/03 պայմանագրի՝ պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման, Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման համար 2025 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում ՊՈԱԿ-ին փաստացի տրամադրվել է 41272.1 հազար ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), որից 9432.8 հազար ՀՀ դրամը (ներառյալ ԱԱՀ), ուղղվել է մաքրման աշխատանքների իրականացմանը, իսկ 31839.3 հազար ՀՀ դրամը (ներառյալ ԱԱՀ) ուղղվել է ՊՈԱԿ-ի աշխատակիցների վարձատրությանը:

Չորրորդ եռամսյակ- Համաձայն շրջակա միջավայրի նախարարության և ՊՈԱԿ-ի միջև 2025 թվականի հունվարի 22-ին կնքված N ՇՄՆ-ԴՇ-25/03 պայմանագրի՝ պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման, Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման համար 2025 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում ՊՈԱԿ-ին փաստացի տրամադրվել է 33017.8 հազար ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), համաձայն պայմանագրի 16144.5 հազար ՀՀ դրամը (ներառյալ ԱԱՀ) պետք է տրամադրվի հաշվետվությունները ներկայացնելուց հետո: Արդյունքում չորրորդ եռամսյակում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին հատկացված դրամաշնորհի թիվը կկազմի

49162.3 հազար ՀՀ դրամը (ներառյալ ԱԱՀ), որից 3966.2 հազար ՀՀ դրամը (ներառյալ ԱԱՀ) ուղղվել է մաքրման աշխատանքների իրականացմանը, իսկ 45196.1 հազար ՀՀ դրամը (ներառյալ ԱԱՀ)՝ ՊՈԱԿ-ի աշխատակիցների վարձատրությանը:

Գանձումներ. Առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակներում պարբերաբար վարձակալները հեռախոսազանգով տեղեկացվել են իրենց վարձավճարների մասին, կազմվել են շուրջ 1370 ծանուցումներ՝ «Պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության և/կամ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» իրավաբանական կամ ֆիզիկական անձանց միջև կնքված պայմանագրերով նախատեսված վարձավճարների վերաբերյալ, որի արդյունքում հողի վարձավճարներից մուտքը 01.01.2025-12.12.2025 դրությամբ կազմել է 314809.5 հազար ՀՀ դրամ:

Գնումներ. Առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների ընթացքում ՊՈԱԿ-ի կարիքների համար ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու նպատակով կազմակերպվել են 48 ընթացակարգեր, որից՝ 31-ը մեկ անձ, 17-ը՝ գնանշման հարցում: Կազմակերպված ընթացակարգերի արդյունքում կնքվել են 28 պայմանագրեր:

4.Տնտեսական սպասարկման բաժին.

Առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ստորաբաժանումներին տրամադրվել է դիզելային վառելիք, բենզին, գազ, տնտեսական ապրանքներ:

Սևանա լճի ափամերձ տարածքների մաքրման և ճանապարհների հարթեցման աշխատանքների կազմակերպման համար ապահովել է դիզելային վառելիք, տեխնիկա և այլ տնտեսական ապրանքներ:

Իրականացվել է ավտոտրանսպորտի աշխատանքի, վառելիքի և քսայուղերի շարժի հաշվառում, կատարվել է 17 ավտոմեքենաների ընթացիկ վերանորոգում, անցկացվել է 5 մեքենայի տեխ.զննում, կնքվել 5 ավտոմեքենայի ապահովագրական ծառայություն:

Ապահովվել է խմելու ջրի, բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառման սարքավորումների անխափան աշխատանքը:

Տրանսպորտային միջոցների մասին կազմվել են թերությունների ակտեր, տեխնիկական բնութագրեր և ներկայացվել են համապատասխան գնման ընթացակարգեր կազմակերպելու համար:

Փոփոխություններ է մտցվել գնումների պլանում և ներկայացվել է գնման հայտեր ապրանքների ձեռք բերման համար:

Իրականացվել է շենք-շինությունների և հարակից տարածքների մաքրման աշխատանքներ:

Կազմակերպվել և մյուս բաժինների հետ համատեղ իրականացվել է շաբաթօրյակ, որի ընթացքում մաքրվել և բարեկարգվել են «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի վարչական շենքի հարակից տարածքները, Նորաշենի արգելոցը և հանրային լողափները: Վարձակալներին և հանրային լողափերինտ տրամադրվել են աղբամաններ:

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների հետ համատեղ անցկացվել է ավտոմեքենաների ջրային տեխնիկայի գույքագրում և նրանց տեխնիկական վիճակի մանրազննին ուսումնասիրում:

«Սևան» ազգային պարկ»
ՊՈԱԿ-ի տնօրեն _____**Կ. Մնացականյան**
/ստորագրություն/